

3723



ՀԻՆ ԲԱՆՈՒՄՆԵՐԻ
ՊԱՏՄԱԾՆԵՐԸ
ՄԵԾ ԳՈՒՋՆՈՐԳԻ
ՄԱՍԻՆ

3K36

3-59

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ!

РАССКАЗЫ
СТАРЫХ
РАБОЧИХ
О
ВЕЛИКОМ
ВОЖДЕ

Госиздат Грузии
Сектор политической литературы
Тбилиси 1939

3K36
7-59

ՀԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ
ՊԱՏՄԱԾՆԵՐԸ
ՄԵԾ ԱՌԱՋՆՈՐԴԻ
ՄԱՍԻՆ


20 NOV 2009
28 JUN 2005

11.06.2013

3723



1204
40



«ԱՏԱԼԻՆԸ — Անդրկովկասի
բոլշևիկյան կազմակերպությունների
հիմնադիր»

Բարեկյեֆ.
գործ՝ պրոֆ. Յա. Նիկողաձեյի



Հերոսներից դու մեծագույն, մեծ առաջնորդ՝ անպարս ու վեհ,
ԼԵՆԻՆԻ հեռ մեկտեղ դու մեզ պայքարի մեծ լիցք ես սվել:
Կոփեցիր մեր բախսը ծայսուն, ծնունդ սվիր դու մարդկության,
ՍՍՍԼԻՆԸ մեր սխմվուն է արդ՝ հզորության ու արթնության:

Մեր հարազատ, նվիրեցիր մեզ շահել կյանքդ գրկանքով լի,
Քո ցանածը վուկեռողուն հյուքեղ պսուղներ էր սալիս.
Պահպանում ես պողպատ կամքով պատգամները մեծ ԼԵՆԻՆԻ,
Դու յերջանիկ կյանք սեղծեցիր Յերկրի համար Խորհուրդների:

Այս մեծ սոնին Քեզ են ուղղված մեր մտքերն ու սերը անծայր,
Թող ՍՍՍԼԻՆԸ յերկար ապրի վորպես խնդության ծիածան.
Գործարանների շառաչում, քնդում է Վրաց յերկրավր մեկ՝
«Ի խնդություն վողջ մարդկության, յերկար ապրի ՍՍՍԼԻՆԸ մեծ»:

Թարգմ.՝ ՎԱՐԴ. ՍԻՄՈՆՅԱՆ

Խորհրդային Վրաստանի 15-րդ տարեդարձի ուրբ,
Խորհրդային Վրաստանի աշխատավորների կողմից ժողովուրդների մեծ առաջնորդ մեծ ՍՍՍԼԻՆԸ ուղղված նամակից:



ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Այս գրքում հավաքված են Թբիլիսիի, Բագվի և Բաթումիի հին բանվորների պատմածներն ընկեր ՄՏԱԼԻՆԻ հեղափոխական գործունեության մասին՝ Անդրկովկասում այն տարիներին, յերբ գրվում էին Լենինի—ՄՏԱԼԻՆԻ մեծ կուսակցության հիմքերը:

Գիրքը բաղկացած է յերեք բաժնից:

Առաջին բաժնում, վորն անվանված է «Առաջնորդի պատանեկան տարիները», զետեղված են Գորիի հոգևոր ուսումնարանի և Թիֆլիսի սեմինարիայի նախկին աշակերտների հիշողությունները: Գորիի հոգևոր ուսումնարանում և Թիֆլիսի սեմինարիայում սովորել է ընկեր ՄՏԱԼԻՆԸ: Այդ հիշողությունները նկարագրում են Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ջուղաշվիլու մանկության ու հեղափոխական պատանեկության առանձին դրվագները:

Գրքի յերկրորդ բաժինը—«Հեղափոխական պայքարի ստալինյան դպրոցը»—ընդգրկում է այն մեծ տարիները, յերբ հեղափոխական բանվորական շարժման արշալույսին Անդրկովկասում ընկեր ՄՏԱԼԻՆԸ դրեց առաջին լենինյան-խակրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գրանիտե հիմքը, անդուլ կերպով ղեկավարելով դրանց:

Յերրորդ բաժնում—«Ստալինյան տողերի մեծ ուժը»—զետեղված են հին բանվորների պատմածներն ընկեր ՄՏԱԼԻՆԻ մասին, վորոնք նկարագրում են Անդրկովկասում բոլշևիկյան մասուլի մեծ հիմնադրի դեմքը:

Գրքում զետեղված նյութերն ընկեր Լավրենտի Բերիայի «Անդրկովկասի Բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» զեկուցման արձագանքներն են և պարունակում են ընկեր ՄՏԱԼԻՆԻ հեղափոխական աշխատանքի առանձին դրվագների մասին հին բանվորների պատմածները, վոր հավաքել է «Ջալա Վասոկա» թերթի խմբագրությունը և վորոնք հետեվողականորեն զետեղված են յեղել թերթի եջերում, սկսած 1935 թվականի սեպտեմբերից մինչև 1936 թվականի նոյեմբերը:



Լ. ԱՌԱՋՆՈՐԴԻ
ՊԱՏԱՆԵԿԱՆ
ՏԱՐԻՆԵՐԸ

**ԴԵՐՄԱՆԱԿԱՆ ԳՐՈՂ
ԵՄԻՆ ԼՅՈՒԴՎԻԴԻ ՀԵՏ
ԸՆԿԵՐ ՍՏԱԼԻՆԻ
ՈՒՆԵՅԱԾ ԶՐՈՒՅՅԻՑ**

1931 թ. դեկտեմբերի 13

ԼՅՈՒԴՎԻԴ. Թույլ տվեք Ձեզ մի բանի հարց տալ Ձեր կենսագրությունից: Յերբ յես Մասարիկի մոտ եյի, նա ինձ հայտնեց, Վոր իրեն սոցիալիստ ե գիտակցել արդեն 6 տարեկան հասակից: Ի՞նչը և յերբ Ձեզ սոցիալիստ դարձրեց:

ՍՏԱԼԻՆ. Յես չեմ կարող պնդել, Վոր յես արդեն 6 տարեկան հասակից ձգտում եմ ունեցել դեպի սոցիալիզմը: Յեմ նույնիսկ Վոչ 10 կամ 12 տարեկան հասակից: Յես հեղափոխական շարժման մեջ մտել եմ 15 տարեկան հասակից, յերբ կապվեցի այն ժամանակ Անդրկովկասում ապրող ռուսական մարքսիստների ընդհատակյա խմբակների հետ: Այդ խմբակներն ինձ Վրա մեծ ազդեցություն ունեյին և իմ մեջ ճաշակ պատկաստեցին դեպի մարքսիստական ընդհատակյա գրականությունը:

ԼՅՈՒԴՎԻԴ. Ի՞նչը Ձեզ ստիպեց ոպոզիցիոն դիրք բռնել: Գուցե Ձեր ծնողների վատ վերաբերմունքը:

ՍՏԱԼԻՆ. Վոչ: Իմ ծնողներն անուսում մարդիկ եյին, բայց նրանք ինձ հետ բնավ վատ չեյին վարվում: Այլ բան ե հոգեվոր սեմինարիան, ուր յես այն ժամանակ սո-

վորում էյի: Արհամարհական ռեժիմի և սեմինարիայում
յեղած ճիգվիտական մեթոդների դեմ դժգոհությունից —
յես պատրաստ էյի դառնալու և իրոք դարձա հեղափոխա-
կան մարքսիզմի, վորպես իսկական հեղափոխական ուս-
մունքի կողմնակից:

ԼՅՈՒԴՎԻԳ. Բայց միթե Դուք չեք ընդունում ճիգ-
վիտների դրական հատկությունները:

ՍՏԱԼԻՆ. Այո, նրանք ունեն սխտեմատիկություն,
տոկունություն աշխատանքում: Բայց նրանց հիմնական
մեթոդը — հետապնդումն է, լրատվությունը, հոգու մեջ
խցկվելը, արհամարհանքը, — դրանում դրական ի՞նչ կարող է
լինել: Որինակ, հետապնդումն պանսիոնատում. ժամը 9-ին
թեյի զանգը, գնում ենք ճաշարան, իսկ յերբ վերադառնում
ենք մեր սենյակները, պարզվում է, վոր այդ ժամանակա-
միջոցում արդեն խուզարկել և տակնուվրա յեն արել մեր
իրերի արկղները... Դրանում ի՞նչ դրական բան կարող է
լինել:

Գորիի հոգևոր ուսումնարանի, վորտեղ սովորել է ընկեր
ՍՏԱԼԻՆԸ, նախկին աշակերտների հիշողությունները պատկերում
են մեծ առաջնորդի պատանեկան տարիներին վերաբերող առան-
ձին հալիդոդներ:

Բարձր սկզբունքայնություն, ուղղատեսություն, հաստատա-
կամություն, տոկունություն՝ առաջադրված նպատակին հասնելու
մեջ, զգայուն և հոգատար վերաբերմունք դեպի ընկերները, ան-
դու աշխատանք իր վրա, համեստություն, — բոլոր այս գծերը
հատկանշում են յերիտասարդ Իոսիֆ Զուղաշվիլուն դպրոցական
նստարանից:

Դաժան, կարիքներով ու զրկանքներով լի տարիները չընկ-
նեցին պատանի Զուղաշվիլուն, նրա մեջ չմեղցրին գիտության
ծարավը և իր վրա աշխատանք թափելու մշտական, հաստատա-
կամ ձգտումը:

«Նա յերբեք զգացնել չէր տալիս իր գերազանցությունը,
թեպետ նա ավելի զարգացած էր քան թե մենք, — ասում է իր հի-
շողություններում Պ. Քափանաձեն, — նա չեր գոռողանում նրանով,
վոր մեզանից ավելի ընդունակ է, այլ, ընդհակառակը, ոգնում էր մեզ
իր գիտելիքներով»:

Այս մի քանի տողերում տրված է մեր ժամանակի յերիտա-
սարգ մարդու իդեալը, վորին պետք է ձգտել ամեն ոք, — հարըս-
տացնել իրեն գիտելիքներով, կուտակել դրանք, լինել որինակե-
լի, բարձր սկզբունքայնության և գիտակցության տիպար, չը-
հանգստանալ ձեռք բերածով, հիշել, վոր համեստությունը կու-
տակցական և վոչ-կուտակցական բոլորակի առանձնահատուկ վո-
րակն է, չգոռողանալ, աստիճանաբար կատարելագործվել...

Հիշողութիւնները յերիտասարդ ՄՏԱԼԻՆԻ մասին խորհրդային յերիտասարդութեան լայն շերտերին կդաստիարակեն բոլշևիկյան տոկունութեան, իրեն նկատմամբ պահանջկոտութեան, իրեն վրա, իր քաղաքական և ընդհանուր կուտուրական պատրաստութեան մակարդակը բարձրացնելու վրա անխոնջ, սխտեմատիկ աշխատանք կատարելու վոգով, կոփելով Լենինի-ՄՏԱԼԻՆԻ կուսակցութեանը նվիրվածութեան վոգով:

Մորհրդային Վրաստանի աշխատավորներն ընկեր ՄՏԱԼԻՆԻ ուղղված նամակում, վոգեշնչված տողերում, վորոնք տոգորված են ջերմ սիրով, արտահայտեցին իրենց մտքերն ու ապրումները:

Մեր հարագաւ, նվիրեցիր մեզ ջանել կյանքդ գրկանքով լի, Բա ցանաճը վոսկեւոյուն հյուքեղ պոսւղներ ե ցալիս:
Պահպանում ես պողպոս կամքով պոսգամներ մեծ Լենինի, Դու յերջանիկ կյանք ստեղծեցիր Յերկրի համար հոգեւորներ:

Ստալինյան մեծ ցանքսը տվեց ճոխ, հարուստ ծիւեր: Վոչինչ չկարողացավ խեղդել նրանց: յերիտասարդ ՄՏԱԼԻՆԻ համարձակ կերպով մարքսիստական, լենինյան աշխարհայացքի սերմերը տարավ մասսաների մեջ, հոգատարութեամբ աճեցրեց այդ ծիւերը: Յեւ այսօր իրենց գույների հարստութեամբ պայծառորեն փայլում են ստալինյան ցանքսի այդ հզոր ծիւերը, մարմնավորվելով ստալինյան անսասան բարեկամութեամբ զոգված Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի աշխատավորների մեծագույն հաղթանակներում:

Այդ ծիւերը ստալինյան կոփվածութեան տեր մարդկանց մեջ են, ստալինյան դպրոցի մարդկանց մեջ, վորոնք անսահմանորեն նվիրված են Լենինի-ՄՏԱԼԻՆԻ կուսակցութեանը, նրա Ստալինյան Կենտկոմին, նրա մեծ առաջնորդին, վորի կամքը գործողութեան ղեկավարութիւնն է, անխախտելի որենք, նոր հաղթանակների ուղի:

«Ջարյա Վոսոնկա»-ի 1936 քվեակնի ոգոսոսի 12-ի «Մեծ ուրիմակը» առաջնորդող հոդվածից:

Պ. ՔԱՓԱՆԱԶԵ

«ՅԵՍ ՊԵՏԲ Ե ՏԵՍՆԵՄ ԼԵՆԻՆԻՆ»

Հիշում եմ մեր Գորիի հոգեվոր ուսումնարանում գտնվելու տարիները:

Արտաքինից Իոսիֆ Ջուղաշվիլին նիհար, բայց ամրակազմ տղա յեր: Լինելով կենսուրախ և սրտաբաց, նա միշտ շրջապատված էր ընկերներով: Իր հասակակիցների հետ նա առանձնապէս սիրում էր գնդակ և «լախտի» խաղալ: Դրանք աշակերտների սիրած խաղերն էին: Իոսիֆը գիտեր ընտրել լավագույն խաղացողներին և մեր խումբն այդ պատճառով միշտ տանում էր:

Յես Իոսիֆի հետ միասին սովորել եմ 13 տարի, ինքս 35 տարի ուսուցչութիւնն եմ անում և այս բոլոր տարիներին յես առիթ չեմ ունեցել հանդիպելու այդպիսի շնորհունակ և ընդունակ աշակերտի:

Իոսիֆը սովորեց հիանալի նկարել, թեև այդ տարիներին ուսումնարանում մեզ նկարչութիւն չէին սովորեցնում: Հիշում եմ նրա նկարած Շոթա Ռուսթաւելու և վրացական մյուս գրողների դիմանկարները:



Աշակերտական տարիներին ՍՏԱՆԻՆԸ կարդաց Գորիի գրադարանում յեղած գրեթե բոլոր գրքերը—Իգնատե Նի-նոզվիլու, Իլիա Ճավճավաձեյի, Ակակի Ծերեթելու և մյուս-ների յերկերը։ Լավագույն ստեղծագործությունները նա խորհուրդ էր տալիս կարդալու նաև մեզ, իր ընկերներին, և հաճախ պատմում էր կարդացածի բովանդակությունը։ Հիշում եմ, թե ինչպիսի մեծ տպավորություն էր գործել նրա վրա Ի. Նինոզվիլու «Գոգիա Ուխտիլի» վիպակը, վո-րի մեջ նկարագրված է գյուղացիների ճնշված ու իրավա-զուրկ դրությունը։ «Պետք է սովորել ու սովորել,—ասում էր Իոսիֆը,—վորպեսզի ոգնենք գյուղացիներին»։


Իոսիֆ Զուգաշվիլին աչքի յեր ընկնում մեծ համե-տություն և լավ, զգայուն ընկեր էր։ Նա յերբեք զգացնել չէր տալիս իր գերազանցությունը, թեպետ նա ավելի դա-րձացած էր, քան թե մենք։ Նա չէր գոռոզանում նրանով, վոր մեզանից ավելի ընդունակ է, այլ, ընդհակառակը, ոգնում էր մեզ իր գիտելիքներով, ոգնում էր մեզ նկարել աշխար-հագրական քարտեզներ, լուծել խնդիրներ, պատրաստել դասեր։

Իոսիֆը հաստատակամ ու յեռանդուն էր։

Դրա հետ մեկտեղ զգայունությունն ու հոգատարու-թյունը դեպի ընկերները կազմում էին նրա բնավորու-թյան աչքի ընկնող գիծը։

Այդ հոգատարության մասին է խոսում թեկուզ հե-տեվյալ փաստը։

Մի անգամ, քննությունների հենց նախորդակին, յես հիվանդացա ու դիմեցի ուսումնարանի վերակացու Բեյա-յեվին, խնդրելով ազատել ինձ քննություններից։ Բեյաեք մերժեց։ Յես խիստ ընկճված էյի մերժումից։ Այդ մասին իմացավ Սոսոն և սկսեց սնդել, վորպեսզի յես իր հետ գնամ Բեյաեի մոտ, միասին խնդրենք։ Յես համոզում էյի նրան այդ մտադրությունից հրաժարվել, հավատացած լի-



ներով, վոր դրանից վոչինչ դուրս չի գա: Այնուամենայ-
նիվ, Սոսոն ինձ համոզեց գնալ Բեյլաեի մոտ և այնպիսի
վճռականությամբ, համարձակությամբ ու հաստատակամու-
թյամբ սկսեց վերակացույին համոզել, վոր նա զիջեց:

Հաջորդ տարիներին, գտնվելով Թիֆլիսի սեմինարիա-
յում, ՄՏԱԼԻՆԸ մասնակցեց ընդհատակյա խմբակներին և
շարունակեց հափշտակվել գրքերի ընթերցանությամբ:

Նա ուսումնասիրում էր յերկրաչափությունը: Այնու-
հետև ձեռնամուխ յեղավ քիմիային: Նա սկսեց կարդալ
Մարքսին: Կազմակերպեց խմբակ և ինքը ղեկավարում էր
այն: Այդ խմբակում ուսումնասիրում էին բանվորական
շարժումը: Այս առթիվ ՄՏԱԼԻՆԸ հաճախ ասում էր, վոր
պետք է աշխատանք սկսել բանվորների շրջանում:

Թիֆլիսում՝ սեմինարիայում, ՄՏԱԼԻՆԸ առաջվա պես
կենսուրախ ու զգայուն ընկեր էր: Բայց այստեղ, ըստերե-
վույթին, նրա մեջ բեկում կատարվեց:

Նա արդեն այնպես ջանասեր աշակերտ չէր, ինչպես
առաջ: Պարապմունքից ազատ ամբողջ ժամանակը նվիրում
էր քաղաքական գրականության ընթերցանությանը, ու-
սումնասիրում էր մարքսիզմը, բանվորական շարժումը:

Առանձնապես իմ հիշողության մեջ տպավորվեց մի
ուշագրավ փաստ: Դա 1898 թվականին էր: Մի անգամ
առավոտ, թեյից հետո, յես սեմինարիայից դուրս յեկա
Պուշկինյան պարտեզը: Այստեղ յես տեսա ՄՏԱԼԻՆԻՆ,
շրջապատված մի խումբ ընկերներով: Նա ջերմ կերպով
բանավիճում էր նրանց հետ, քննադատում էր ժողովրդա-
յի հայացքները: Դա բոլորին հափշտակել էր:

Յեվ այստեղ, այգում, մենք առաջին անգամ լսեցինք
«Լենին» բառը:

Հնչեց զանգը, մենք սկսեցինք ցրվել՝ շտապելով դասի:
Յեռ մոտեցա Իոսիֆին, զարմացած, թե ինչպես խիստ
կերպով է քննադատում նա ժողովրդային հայացքները:

Իոսիֆը հաղորդեց, վոր կարգացել է Լենինի հոգևածները,
վորոնք իրեն չատ դուր են յեկել:

— Յես ինչ գնով ել լինի, պետք է տեսնեմ Լենինին,
ասաց ինձ նա այն ժամանակ:

1898 թվականին ասված այդ խոսքերը յես հիշեցրի
ընկեր ՄՏԱԼԻՆԻՆ 1926 թվականին նրա հետ հանդիպելիս
և նա մտաբերեց այդ եպիգրադ:

Գ. ԳԼՈՒՐՋԻՋԵ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՏԱՐԻՆԵՐ

Յես սովորել եմ Գորիի հոգևոր դպրոցում, իսկ այնու-
հետև Թիֆլիսի հոգևոր սեմինարիայում, և այդ տարիներ-
ին հանդիպել եմ ՄՏԱԼԻՆԻՆ:

Հիշում եմ այն հագուստը, վորով ձմռանը Իոսիֆ
Ջուղաշվիլին յերևաց դպրոցում: Նրա հոգատար մայրը,
վորը կյանքի միջոցներ եր հայթայթում ձև անելով, կար
անելով ու սպիտակեղեն լվանալով, ջանք եր թափում,
վորպեսզի վորդին տաք հագնվի և մաքուր:

Իոսիֆը հագած եր կապույտ վերարկու, յերկարածիտ
կոշիկներ, թաղիքե գլխարկ և գործած գորշ թաթմաններ:
Վիզը փաթաթված եր լայն կարմիր շարֆով: Դուր եր գա-
լիս մեզ նրա պայծառ շարֆը:

Իոսիֆը միջահասակ եր, նիհար: Նա դպրոց եր գա-
լիս ուսից կախած կարմիր չիթից պայուսակը: Քայլվածքը՝
վստահ, հայացքը՝ աշխուժ—ինքն ամբողջապես՝ շարժուն,
կենսուրախ:

Առաջին տարիներին, նախապատրաստական բաժան-
մունքներում Խոսիֆը սովորում էր գերագանց, և գնա-
լով ավելի պայծառորեն եյին զրսեվորվում նրա ընդունա-
կությունները, և նա դարձավ առաջին աշակերտներից
մեկը:

Դպրոցին կից կար գրադարան: Յերբ մենք մեծացանք՝
տարվեցինք ընթերցանությամբ: Վարչությունը մեզ այն-
պիսի գրքեր էր տալիս, վորոնք մեր ճաշակով չէին, և
մենք գրականութուն եյինք ձարում Արսեն Կալանդաճեյի
մոտ, վորը գրականութ ուներ Գորիում: Կալանդաճեյի
մոտ մենք ճարեցինք Ակակի Ծերեթելու, Իլիա Ճավճավա-
ճեյի, Ռ. Երիսթավիի և մյուսների գրքերը, գրքեր, վորոնք
մեզ պատմում էին այն մասին, վոր աշխարհում կատար-
վում են ինչ-վոր այլ գեպքեր, վոր դպրոցը մեզ համար
խորթ մայր է:


Դասատուների մեծամասնությունը մեր նկատմամբ
ունեցած վերաբերմունքով մեզ ավելի ևս համոզում էր
այդ բանում: Մենք խուսափում էինք նրանցից և նրանց
մեջ սրտացավություն չէինք զգում: Մեզ համար պարզ
էր, վոր դպրոցը ձգտում է մեզ դաստիարակել ստրուկներ,
այլ վոչ թե ազատ մարդիկ:

Մենք սովորում էինք դասերը, պարապում, բայց մեր
աչքից չէր վրիպում այն, վոր դպրոցի պատերի յետևը
թաղնվում է «ինչ-վոր» ուրիշ բան, այն ժամանակ մեզ հա-
մար վոչ պարզ իր գծագրությամբ, սակայն գրավիչ, լու-
ծում պահանջող բան:

Խոսիֆը մյուսներից ավելի լավ էր վերահասու լինում
այդ «ինչ-վոր բանին»:

Յեթե հիշողությունս չի դավաճանում ինձ, այն
դրույցը, վորի մասին յես ցանկանում եմ պատմել, տեղի
ունեցավ, յերբ Խոսիֆը և յես 13 տարեկան էինք:

Ամառային արձակուրդների ժամանակ, Բերչուետի



ԳՈՐԻ.—Մյն սենյակը, ուր իր մանկության
առաջին տարիներն է անցկացրել բնիկը ՍՏԱԼԻՆԸ:

հայրենի գյուղից Գորի վերադառնալով՝ յես այցելեցի Իոսիֆին և մենք դուրս յեկանք զբոսնելու փողոցում։ Անցանք Բուռ գետի կամուրջը, անցանք յերկաթուղագծից այն կողմը և պառկեցինք կանաչ մարգագետնին։

Լինելով յերիտասարդ, դեռևս կյանքում չփորձված, մենք սիրում էինք զրուցել վերացական թեմաների մասին։ Յես խոսեցի աստծու մասին։ Իոսիֆը լսեց ինձ և րոպեյական լռությունից հետո պատասխանեց.

— Գիտես, մեզ խաբում են, աստված գոյություն չունի։

Այս խոսքերը զարմացրին ինձ։ Դեռևս վոչ վոքից յես այդպիսի խոսքեր չէի լսել։

— Սոսո, ի՞նչ ես ասում դու։

— Յես քեզ մի գիրք կտամ, կարդա և կտեսնես, վոր աշխարհն ու մեր վողջ կյանքը բոլորովին այլ կերպ են կառուցված, և աստծու մասին յեղած խոսակցությունները դատարկ շաղակրատություն են,— ասաց Իոսիֆը։

— Ի՞նչ գիրք ե դա—հետաքրքրվեցի յես։

— Դարվին։ Անպայման կարդա—խրատական յեղանակով ասաց Իոսիֆը։

* * *

Գորիի ուսումնարանից հետո յես նորից հանդիպեցի Իոսիֆ Զուղաշվիլուն Թիֆլիսի հոգեվոր սեմինարիայում։ Ծանր եր ուեժիմն այդ դպրոցում։ Չեր կարելի կարդալ թերթ, գնալ թատրոն, յերեկոյան ժամը հինգից հետո դուրս գալ փողոց։ Անվերջ աղոթքներ՝ դասից առաջ, նախաճաշից առաջ, ճաշից առաջ, քնելուց առաջ։ Շաբաթ և կիրակի օրերին՝ յերկարատեպ, հոգնեցուցիչ պատարագներ։ Խիստ ձանձրացնում էին մեզ։

Աշակերտների նկատմամբ սահմանված եր հսկողություն ուսուցիչների կողմից։ Կուպիտ հանդիմանությունները, կարգերը (խավար սենյակ), վարքի համար 2 (վատ) թվանշան դնելը և, վերջապես, սեմինարիայից հեռացնելը ծառայում էին իբրև տուժանքի չափեր աշակերտության նկատմամբ։

* * *

Իոսիֆը տարվեց «Կողմնակի» գրքերի ընթերցանությամբ: Նրա շուրջն եյին հավաքվում ընկերները:

Վորպեսզի ավելի լավ հասկանանք մեզ հետաքրքրող հարցերը, մենք կարդում եյինք Լիպպերտի «Կուլտուրայի պատմութիւնը», Լեվ Տոլստոյի «Պատերազմ և խաղաղութիւնը», «Տերն ու ծառան», «Կրեյցերյան սոնատ»-ը, «Հարութիւն»-ը, ինչպես և Պիտերը, Դոստաևսկին, Շեքսպիրը, Շիլլերը և այլն:

Յերբեմն մենք կարդում եյինք յեկեղեցում, ծիսակատարութեան ժամանակ, թագնվելով շարքերում: Մենք գրքերը կարդում եյինք, ի հարկե, մեծ զգուշութեամբ, վորպեսզի վերակացուների աչքին չընկնէինք:

Գիրքը Իոսիֆի անբաժան ընկերն էր և նրանից անբաժան էր նույնիսկ ուտելու ժամանակ:

Սովորաբար Իոսիֆը հարցերին պատասխանում էր առանց շտապելու: Յեթե նրա մոտ պատրաստ էր բազմակողմանիորեն հիմնավորված պատասխանը, նա պատասխանում էր, իսկ յեթե վոչ, նա պատասխանը հետաձգում էր ավելի կամ պակաս կարճ ժամանակով:

Այն ժամանակ դասավանդվող առարկաներից Իոսիֆը սիրում էր քաղաքացիական պատմութիւնը և տրամաբանութիւնը: Այդ առարկաներից նա միշտ հինգ ունէր: Մնացած առարկաներից նա տարվա վերջն էր պատրաստվում ըննութիւններին:

Սեմինարիայի անտանելի հեղձուցիչ մթնոլորտում մեզ համար մեծ գլարճութիւն եյին յերգերը: Արտասովոր բավականութիւն եյինք զգում մենք, յերբ Սոսոն մեզ ներգրավում էր յերգեցիկ խմբում և իր հնչեղ, զուրեկան ձայնով յերգում էր ժողովրդական սիրելի յերգերը:

Դ. ԳՈԳՈՒՒԱ

ՎՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ

ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆՍ ՄԵՋ

ՄՆԱՅԵԼ ԵՆ ԱՅՆ ՈՐԵՐԸ

Գորի քաղաքը հարավից և արևմուտքից փոկողում են Քուռն ու Լիախան: Նա շրջապատված է պտղատու այգիներով: Քաղաքում խոյանում են հնադարյան ամրոցի ավերակները — միջնադարի հուշարձանը:

Հին Գորիում կային մոտ 8000 բնակիչներ, շատ յեկեղեցիներ, խանութներ, գինեաներ և այն ժամանակվա ամբողջ գավառի համար չորս ուսումնական հաստատութիւն՝ քաղաքային 4-դասյան դպրոց, 4-դասյան հոգևոր դպրոց, ուսուցչական սեմինարիա և կանանց վոչ-լրիվ գիմնազիա:

Այդ քաղաքում, կոշկակար Վիսսարիոն Զուղաշվիլու ընտանիքում 1879 թ. ծնվեց մի տղա, վորին ավին Իոսիֆ անունը:

1890 թվականին, մտնելով Գորիի հոգևոր դպրոցը, յես առաջին անգամ հանդիպեցի տասնեակ տարեկան Իոսիֆ Զուղաշվիլուն:

Առարկաները մեզ մոտ անցնում էին ռուսաց լեզվով և շարաթը միայն յերկու անգամ էին դասավանդում վրացական լեզուն:

Յես, լինելով մեզրելացի, վրացերեն խոսքերն ակցենտով էի արտասանում, դա առիթ տվեց աշակերտներին ծաղրելու ինձ: Իսկ Իոսիֆը, ընդհակառակը, ինձ ողնության յեկալ: Համեստ ու զգայուն, նա մոտեցավ ինձ ու ասաց.

— Դե, արի, յես քեզանից սովորեմ մեզրելական լեզուն, իսկ դու ինձանից վրացականը:

Ընկերով հոգու այդ շարժումն ինձ խիստ հուզեց:

Իոսիֆն աչքի յեր ընկնում վոչ միայն համեստությամբ: Նա իր մեծ ընդունակություններով ու հետաքրքրությամբ առանձնապես աչքի յեր ընկնում աշակերտների շրջանում:

Սովորաբար նա լուրջ էր, հաստատակամ, չեր սիրում չարաճճիություններ և կովարարություն: Պարապմունքներից հետո տուն էր շտապում, և նրան միշտ կարելի յեր ասեսել գիրք կարդալիս:

Իմ քեռի՝ Վիսսարիոն Գոգոթիան, վորի բնակարանում յես ապրում էի, փոխադրվեց Ղիփշիձեյի տունը: Հենց այստեղ, բակում, ապրում էր Իոսիֆն իր մոր հետ միասին:

Նրանց սենյակը 9 քառակուսի արշինից ավելի չեր և գտնվում էր խոհանոցի մոտ: Մուտքը բակից տանում էր սենյակի դեպի սենյակը, չուներ վոչ մի աստիճան: Հատակը շինված էր աղյուսից, փոքրիկ լուսամուտը ժլատությամբ էր լույս ներս թողնում: Սենյակի վոլջ կահ-կարասիքը բաղկացած էին մի փոքրիկ սեղանից, տաբուրետ-կայից և լայն թախտից, վորը նման էր նարի և ծածկված էր «ճիլոպով» — ծղնոտե խալիրով:

Իոսիֆի մայրը համեստ աշխատավարձ ուներ, զբաղվում էր լվացք անելով և Գորիի հարուստ բնակիչների



Բնկեր ՍՏԱՆԻՆԸ (չորրորդ վերին շարքում) Գորի բաղամի հոգևոր ուսումնարանի աշակերտների ժողովում:

տներում հաց թխելով: Բնակարանի համար ամսական պետք եր վճարել մեկ և կես ռուբլի, բայց միշտ չէր հաշտվում այդ մեկ և կես ռուբլին հավաքել:

Մոր աշխատավորական ծանր կյանքը, չքավորությունն արտահայտվում էյին Իոսիֆի բնավորության մեջ: Նա չէր սիրում գնալ այն մարդկանց մոտ, վորոնք ունեւոր կյանք էյին վարում: Զնայած նրան, վոր յես որը մի քանի անգամ լինում էյի նրա մոտ, նա ինձ մոտ շատ հազվադեպ եր բարձրանում, վորովհետեւ իմ քեռին, ըստ այն ժամանակների՝ հարուստ եր ապրում:

Իոսիֆի հայրը, Վիսսարիոնը, ամբողջ որն աշխատանքում եր անցկացնում, կոշիկ եր կարում ու կարկատում:

Իոսիֆն ինչին վոր ձեռնամուխ լինեւր—ամեն ինչ յուրացնում եր խորապես ու հիմնավոր կերպով: Դասեր պատրաստելու վրա նա շատ քիչ ժամանակ եր կորցնում:

Շնորհիվ իր բացառիկ հիշողության, նա ուշադիր կերպով լսելով մանկավարժին, սերտում եր իր դասը և կրկնության կարիք չէր զգում:

Պարապմունքներից ազատ ժամանակը տրամադրում եր գրքերի ընթերցանությանը: Նա կարդացել եր այն բոլորը, ինչ կար դպրոցական զբաղարանում, այն ե՝ վրացական և ռուսական կլասիկների յերկերը և իր զարգացումով ու գիտելիքներով իր դպրոցական ընկերներից շատ բարձր եր կանգնած: Դա միայն հիմք ծառայեց, վոր նրան ամսական թոշակ նշանակեցին:

Գորիի հոգևոր դպրոցը մենք ավարտեցինք 1894 թվականին: Ավարտական քննություններին Իոսիֆն առանձնապես աչքի ընկավ: Բացի ավարտական վկայականից, վոր զարգարված եր բացառապես հինգերով, նրան տվին գովասանագիր, վորն այն ժամանակվա համար արտասովոր գեպք եր, վորովհետեւ նրա հայրը հոգևոր կոչում չուներ և զբաղվում եր կոշկակարական արհեստով:

Նույն այդ 1894 թվի աշնանը մենք յեկանք Թիֆլիս — մեր կյանքում առաջին անգամ յեղանք մեծ քաղաքում:

Մեզ տարան մի չորսհարկանի տուն, հանրակացարանի վիթխարի սենյակները, ուր տեղավորվում էյին 20—30 հոգի: Դա հենց Թիֆլիսի հոգևոր սեմինարիայի շենքն էր:

Կյանքը հոգևոր սեմինարիայում միապաղաղ ու միակերպ էր ընթանում: Մենք յեկնում էյինք առավոտյան ժամը 7-ին: Սկզբում մեզ ստիպում էյին աղոթել, հետո մենք թեյ էյինք խմում, զանգից հետո գնում էյինք դասարան: Որապահ աշակերտը կարգում էր «յերկնային թագավորին» աղոթքը և պարապմունքները շարունակվում էյին ընդմիջումներով, մինչև ցերեկվա ժամը յերկուսը: Ժամը 3-ին ճաշն էր, յերեկոյան ժամը 5-ին — ստուգումը, վորից հետո խստիվ արգելվում էր փողոց դուրս գալ:

Մենք մեզ զգում էյինք քարե տուրակի մեջ: Մեզ նորից տանում էյին յերեկոյան աղոթքի, ժամը 8-ին թեյ էյինք խմում, հետո ցրվում էյինք դասարանները՝ դասեր պատրաստելու, իսկ ժամը 10-ին — դեպի մահճակալները՝ քնելու:

Աշակերտներն իրավունք չունէյին քննարկելու իրենց կարիքներն ու պահանջները:

Այն բոլորը, ինչ դասավանդվում էր, իբր թե անխախտելի ճշմարտություն էր: Վայ հետաքրքրասերին ու հարցասերին: Կասկածներ տեղի չպիտի ունենային: Քննադատական դատողությունը բնության այս կամ այն յերեկվոյթի մասին, սուրբ զրոց եջերի մասին, սրբապղծությունն էր համարվում:

Տեսուչ Աբաշիձեն խստիվ ու բծախնդիր կերպով հետևիվում էր գիշերօթիկներին, նրանց մտապատկերներին, ժամանցին և, բացի դրանից, ի .են թույլ էր տալիս խուզարկություններ կատարել: Խուզարկում էր մեզ և մեր անձնական արկղները:

Սեմինարիայի մթնոլորտը ճնշում էր Իոսիֆ Զուղաշվիլուն: Նա իսկույն հասկացավ, վոր սեմինարիայում դասավանդվող առարկաները չեն կարող բավարարել զարգացած մարդուն:

Նա ծարավի յեր իմանալու աշխարհում տեղի ունեցող ամեն ինչի հիմունքները, աշխատում էր գտնել սկզբնապատճառը, ձգտում էր այն հարցերի պարզ ըմբռնմանը, վորոնց սեմինարիայի կուրսը պատասխան չեր տալիս:

Իոսիֆը դադարեց դասերին ուշադրություն դարձնելուց, սովորում էր յերեքներով, միայն թե մի կերպ քննությունները տա: Նա ժամանակ ու յեռանդ չեր կորցնում սուրբ զրոց լեգենդները յուրացնելու վրա և արդեն առաջին դասարանից սկսեց հետաքրքրվել աշխարհիկ գրականությամբ, հասարակական-տնտեսական հարցերով: Դրանում նրան ոգնում էյին բարձր դասարանի աշակերտները: Իմանալով ընդունակ և հարցասեր Իոսիֆ Զուղաշվիլու մասին, նրանք սկսեցին զրուցել նրա հետ և ժուռնալներ ու գրքեր մատակարարել նրան:

Մի տարվա ընթացքում Իոսիֆը քաղաքականորեն այնքան զարգացավ, աճեց, վոր արդեն յերկրորդ դասարանից սկսեց ղեկավարել սեմինարիայի մի խումբ ընկերների:

ՄՏԱԼԻՆԸ ինքնուրույն կերպով կազմեց խմբակի աշխատանքի պլանը և զրույցներ էր անցկացնում մեզ հետ: Սակայն խմբակ վարել սեմինարիայի պատերի մեջ համարյա հնարավոր չեր: Տեսուչ Աբաշիձեն խիստ հակողություն էր սահմանել: Նա զգում էր, վոր ինչ-վոր տեղ ինչ-վոր բան է կատարվում, վոր յերիտասարդությունը, բացի սուրբ զրքից, զբաղվում է ելի մի ինչ-վոր այլ բանով, և մենք ստիպված յեղանք մտածել հավաքատեղի մասին:

Իոսիֆի առաջարկությամբ, ամսական հինգ ուսերով մի սենյակ վարձվեց Դավթի լեռան տակ: Այնտեղ մենք

անլեզու կերպով հավաքվում էինք շաբաթը մեկ, յերբեմն՝ յերկու անգամ, ճաշի ժամերից հետո՝ մինչև ստուգումը:

Իոսիֆն ապրում էր պանսիոնում և նա դրամ չունեցրեց, իսկ մենք մեր ծնողներից ստանում էինք ծանրոցներ ու դրամ՝ մանր ծախսերի համար: Այդ միջոցներից վճարում էինք բնակարանի վարձը:

Խմբակի անդամներն ընտրել էր ինքը՝ ՍՏԱԼԻՆԸ, բայց յուրաքանչյուրի հավատարմության և գաղտնապահության ընդունակությունների:


Սեմինարիստների մեջ կային մատնիչներ, վորոնք տեսուչ Աբաշիձեյին միշտ հաղորդում էին աշակերտների տրամադրությունների ու պարապմունքների և, առանձնապես, Իոսիֆ Զուղաշվիլու մասին:

Խմբակում Իոսիֆը մեզ համար կարդում էր Նզնատե Նինոշվիլու յերկերը, բացատրում էր Դարվինի թեորիան մարդու ծագման մասին, իսկ տարվա վերջին մենք անցանք քաղաքա-տնտեսության և Մարքսի ու Ենգելսի գրքերից հատվածների ընթերցանության:

Մենք հետևում էինք նաև «Կվալի» *) թերթի հաղորդագրություններին և նրա եջերում բացված դիսկուսիաներին: Հարցեր էինք տալիս Իոսիֆին և նա մեզ բացատրում էր ամեն ինչ հասարակ, պարզ, հստակ կերպով:

*) «Կվալի» («Ակոս») — ամենօրյա թերթ վրացական լեզվով: 1893 թ. հրատարակվում էր Գ. Ծերեթելու խմբագրությամբ, վորպես լիբերալ-ազգայնական ուղղության օրգան: 1896 թ. ձեռք բերեց «Մեսամե-դասի»-ի մեծամասնության խմբակը (Ն. Ժորժանիա և ուրիշն.) և այդ ժամանակից դարձավ լեզու մարքսիզմի բարձրախոսը: Ռ. Ս. Գ. Բ. Կ. պառակտումից հետո «Կվալի»-ն դարձավ վրաց մենշևիկների օրգանը: Ցարական կառավարությունը «Կվալի»-ն փակեց 1904 թ.: «Մոսթե» («Լրաբեր») — լիբերալ-ազգայնական ուղղության ամսագիր: Լույս էր տեսնում 1894 թ. մինչև 1908 թ. վրացական լեզվով:

Մանոթ. Խմբ.



«Ընկեր ՍՏԱԼԻՆԻ վարումը հոգեվոր սեմինարիայից»

Նկարիչ Բաղդասարյան Զեյնալի

ՄՏԱԼԻՆԸ չեր սահմանափակվում Մարքսի—Ենգելսի գաղափարների բանավոր պրոպագանդով: Նա ստեղծեց ու խմբագրում էր աշակերտական ձեռագիր մի ժուռնալ՝ վրաց լեզվով, ուր լուսաբանում էր խմբակում և «Կվալի»-ի եջերում քննարկվող բոլոր վիճելի հարցերը:

Մեր սեմինարական ժուռնալը յերեսուն եջից բաղկացած մի ժուռնալ էր: Ժուռնալը լույս էր տեսնում ամիսը յերկու անգամ և ձեռքից-ձեռք էր անցնում:

Այդ ժամանակաշրջանում Իոսիֆն ամբողջապես կլանված էր քաղաքական գրականությամբ, բայց զրքեր գնելու համար նա միջոցներ չունեւ: Յեւ ահա նորից ողնության ե գալիս նրա հիանալի հիշողությունը: Նա գնում էր բուկինիստների մոտ, հայացքը սևեռում էր իրեն հետաքրքիր գրքի վրա, բացում էր այն և մինչև բուկինիստը կգբաղվեր գնորդների հետ, կարդում ու մտքում պահում էր իրեն հարկավոր տեղերը:

Աճում ու ամրապնդվում էր հեղափոխական տրամադրությունը սեմինարիստների մեջ: Վեճերն ու դիսպուտները սովորական յերևույթ էյին դառնում: Ձեռագիր ժուռնալը, տպագիր քաղաքական գրականությունը և «Կվալի» ամսագիրը լցնում էյին խմբակի անդամների զրպանները:

Այդ բոլորը չեր կարող աննկատելի անցնել: Տեսուչ Աբաշիձեն ուժեղացրեց հսկողությունը և մեզ համար զրգվար էր խույս տալ նրա սպասարկուների հսկողությունից:

Մի անգամ, յերեկոյան, յերբ մենք դասեր էյինք պատրաստում, անսպասելիորեն դասարանում հայտնվեց Աբաշիձեն: Դատապարտելի վոչինչ չգտնելով արկղներում, նա սկսեց խուզարկել աշակերտներին:

Այդ նույն շաբաթում մանրակրկիտ խուզարկությունից հետո տեսուչն Իոսիֆի մոտ գտավ մի տետրակ՝ մեր ձեռագիր ժուռնալի համար գրված հոդվածով:

Աբաշիձեն չհապաղեց այդ նյութով հանդես գալ սե-

մինարիայի վարչության նիստում: Դրա հետևանքով մենք ստացանք վարքից յերկուս և վերջին նախազգուշացում:

Խմբակում տեղի ունեցող զրույցները և մշտական զիսկուսիսներն անդրադառնում էին մեր սեմինարական պարապմունքների վրա: Սակայն, Իոսիֆը, առանց հատուկ ջանք թափելու, հեշտությամբ փոխադրվեց հաջորդ դասարան: Բայց այդ հաջողությունը խաբուսիկ էր: Դաժան կուսակրոն Աբաշիձեն գլխի յեր ընկնում, թե ինչու տաղանդավոր, զարգացած, աներևակայելի հարուստ հիշողության տեր Զուլաշվիլին «յերեքներով» է սովորում:

Նա այդ հարցը նորից բարձրացրեց սեմինարիայի վարչության նիստում, նկարագրեց մեր հրապուրվելը քաղաքական հարցերով, բնութագրեց Զուլաշվիլու գլխավորող դերն այդ բոլորի մեջ և նրան սեմինարիայից վտարելու վերաբերյալ վորոշում հանել տվեց:

Այդպես վերջացավ մեր դպրոցական համատեղ կյանքը, անցան մանկական ու պատանեկան տարիները:

Իոսիֆ Զուլաշվիլին սեմինարիայից դուրս յեկավ առանց զիպլումի, բայց կյանքի նկատմամբ վորոշ, հաստատուն հայացքներով: Նա արդեն գիտեր ու հասկանում էր, վոր պետք է ճեղքել ու վերակառուցել այդ կյանքը:

Իսկ ինձ բախտը յետ նետեց գյուղը: Հայրս արդեն կենդանի չէր և յես պետք է աշխատանք վորոնեյի:

Իոսիֆը Գորի չվերադարձավ:

Նա ամբողջովին խորասուզվեց հեղափոխական աշխատանքի մեջ:

II. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԴՊՐՈՑԸ

1935 թ. սեպտեմբերի 24-ին հրապարակելով հիմ-
քանվորման պատճառներն ընկեր ՍՏԱԼԻՆԻ հեղա-
փոխական աշխատանքի մասին, վոր գեղեցիկ էր
«ԶԱՐԹԱ ՎՈՍՏՈԿԱ»-ում, «ՊՐԱՎԴԱ»-ն այդ նյու-
թերին նվիրեց՝ «ԿՈՄՈՒՆԻՉՄԻ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍ-
ՆԵՐԸ» առաջնորդող հոդվածը, ուր գրում էր.

«Անցյալի Ինչպիսի պայծառ եղեր են վերակենդանացում
յերեկ «Պրավդա»-ում հրապարակված Անդրկովկասի հին բանվոր-
ների հեղափոխություններն ընկեր ՍՏԱԼԻՆԻ հեղափոխական գոր-
ծունեություն մասին՝ մեր կուսակցության կազմակերպման ար-
շաւույսին: Դեռ յերեք և կես տասնամյակ առաջ ընկեր ՍՏԱԼԻՆԸ,
լինելով մեր հնագույն կազմակերպություններից մեկի՝ Անդրկով-
կասյան կազմակերպության ղեկավարը, ցույց է տվել կոմունիզ-
մի պրոպագանդիստի անթառամ որինակը: Նա արդեն այն ժա-
մանակ ուժեղ հռետորի հռչակ էր վայելում, գիտեր արվեստորեն
ազդել համոզմունքի ուժով և իր վիթխարի երուզիցիայով:

Տեսեք, թե նա ինչպես գիտեր պրոպագանդը միացնել հեղա-
փոխական պայքարի պրակտիկայի հետ, թե նա ինչպես հմտորեն
կառուցում էր իր ապիտացիան, զինելով առաջավոր բանվոր-
ներին ինքնակալության դեմ մղվող իրենց պայքարում: Մեր պրո-
պագանդիստները պետք է դա լավ հիշեն և ընդմիշտ վերջ տան
ամեն տեսակի սխալաստիկայի, սովորեցնեն այնպես, վոր ունեկըն-
դիրը միշտ զինված լինի գաղափարապես, լավ կոփված լինի կու-
սակցության քաղաքականության և ընթացիկ մոմենտի կարեվո-
րագույն հարցերում:

Ընկեր ՍՏԱԼԻՆՆ ռզավում եր ամեն մի դեպքից բանվորնե-
րին բոլշևիկյան բրոյշուրներ, թուղցիկներ մատակարարելու, բան-
վորներին համար կարգալու, կուսակցական գրականությունը բա-
ցատրելու համար: Դա ինչքան հեռու յե մի քանի, թող թույլ
աբմի ասել, կոմունիստների պրակտիկայից, վորոնք գնում են
քաղաքակ հերթական «բեռնավորումը» կատարելու համար, իսկ
հենգաւնի իրականության մեջ քաղքենիների տեսք ունեն: Ինչ
խղճուկ կերպարանք ունեն այն «պրոպագանդիստները», վորոնք
իրենց դպրոցականությամբ, սխոլաստիկայով, անգիր արած դա-
տարէ ֆորմուլաներով փախցնում են սոցիալիզմի համար բոլշե-
վիկներին մղած պայքարի պանծալի, հրապուրիչ եջերի մասին լսե-
լու ցանկությունը:

Ահա թե ինչ ե ասում ընկեր ՍՏԱԼԻՆԻ 1900 թ. խմբակի
մատակարարից մեկը՝ ընկ. Խուրցիլավան:

«Նա, ով գեթ մի անգամ հանդիպել ե ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ,
յերբեք չի մոռանա նրա համեստությունը, իմաստությունը,
դեպքերն արագ ըմբռնելու և ճիշտ, պարզ ցուցումներ տա-
լու հմտությունը, չի մոռանա նրա խորաթափանցությունը,
մարդու մեջ իր վողջ կյանքում բանվոր դասակարգի գործին
անձնուրաց նվիրվածությունը դաստիարակելու հմտությունը,
անհաշտվողականությունը հեղափոխության բոլոր թշնամի-
ների նկատմամբ»:

Ահա թե ինչն ե լինելու մեր պրոպագանդիստի իդեալը:
Ահա թե ինչի պիտի նրանք ձգտեն:

Խոսել այնպիսի հասկանալի ու գրավիչ կերպով, վոր յուրա-
քանչյուր ունկնդիր իր ամբողջ կյանքում կփվածք ստանա: Սովո-
բեցնել այնպես, վոր յուրաքանչյուր ունկնդիր անհամբերությամբ
պատի դեպքի, ստացված գաղափարները գործով իրացնելու համար:
Լինել հստակ, պարզ ամեն մի խոսքի մեջ, ամեն մի պատասխանի
մեջ, վորպեսզի կարելի լինի ունկնդրի մոտ, ըստ հարկին, ստեղծել
պարզ պատկերացում մարքսիզմի-լենինիզմի մեծ ուսմունքի մա-
սին, մեր կուսակցության հեղափոխական ամենահարուստ փորձի
մասին:

Ջրաղվել բոլշևիզմի գաղափարախոսության պրոպագան-
դով—հեշտ խնդիր չե, պահանջում ե մեծ գիտելիքներ, լավ
հմտություն և, վոր առանձնապես կարևոր ե, սիրալիր վերա-
բերմունք դեպի գործը: Պրոպագանդիստների թեթևամիտ ընտ-
րությունը, զեղչ ջանք ստաթի նկատմամբ, լիբերալ վերաբեր-

մունք դեպի դպրոցականությունն արժանի յեն ամեն տեսակի
դատապարտության:

Մենք պետք ե համառ կերպով աճեցնենք տոկոսն ու ընդու-
նակ պրոպագանդիստների կադրեր, մասնագիտացնենք նրանց
այդ գործում և խնամենք նրանց հոգատար ու սիրալիր կերպով:

Անհոգությունը դեպի գաղափարական դաստիարակություն-
նը, դեպի թեորիան միշտ ել խորթ ե յեղել բոլշևիզմին: Այդ ան-
հոգությունը չափազանց բնորոշ ե անկայուն կոմունիստների
համար: Իրենց գիտակից գործունեյության մեջ վոչ թե իրենք
են տիրապետում դեպքերին, այլ դեպքերն են տիրապետում ի-
րենց, ճնշում են նրանց: Նրանք պարզ հեռանկար չունեն: Նրանք
հեշտությամբ են շեղվում ճիշտ ուղուց: Յեվ միմիայն թեորիան,
մարքսիզմի-լենինիզմի թեորիան ե պրակտիկ աշխատողներին
տալիս «կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, համադ-
վածություն աշխատանքում, հավատ դեպի մեր գործի հաղթա-
նակը» (ՍՏԱԼԻՆ):

Պրոպագանդիստներ և ագիտատորներ, ագիտացիայի և պրո-
պագանդի արվեստը սովորեցեք ԼՆՆԻՆԻՑ և ՍՏԱԼԻՆԻՑ: Յեղեք
բոլշևիզմի մեծ տրագիկանների արժանի կրողները, մեր պանծա-
լի կուսակցության արժանի դավակները»:

«Պրավդա»-ի 1935 թ. սեպտեմբերի 24-ի
առաջնորդող նոպածից



Հենկեր ՄՏԱԼԻՆԻ լուսանկարը (1902 թիվ),
գտնված Թիֆլիսի ժանդարմական վարչության արխիվում:

Պ. ԲԱՓԱՆԱԶԵ

«ՅԵՍ ՊԵՏՔ Ե ՏԵՍՆԵՄ ԼԵՆԻՆԻՆ»

Հիշում եմ մեր Գորիի հոգեվոր ուսումնարանում գտնվելու տարիները:

Արտաքինից Իոսիֆ Զուղաշվիլին նիհար, բայց ամրակազմ տղա յեր: Լինելով կենսուրախ և սրտաբաց, նա միշտ շրջապատված էր ընկերներով: Իր հասակակիցների հետ նա առանձնապես սիրում էր գնդակ և «լախտի» խաղալ: Դրանք աշակերտների սիրած խաղերն էին. Իոսիֆը գիտեր ընտրել լավագույն խաղացողներին և մեր խումբն այդ պատճառով միշտ տանում էր:

Յես Իոսիֆի հետ միասին սովորել եմ 13 տարի, ինքս 35 տարի ուսուցչություն եմ անում և այս բոլոր տարիներին յես առիթ չեմ ունեցել հանդիպելու այդպիսի շնորհունակ և ընդունակ աշակերտի:

Իոսիֆը սովորեց հիանալի նկարել, թեև այդ տարիներին ուսումնարանում մեզ նկարչություն չէին սովորեցնում: Հիշում եմ նրա նկարած Շոթա Ռուսթավելու և վրացական մյուս գրողների դիմանկարները:

Աշակերտական տարիներին ՄՏԱԼԻՆԸ կարգաց Գորիի գրադարանում յեղած գրեթե բոլոր գրքերը—Իգնատե Նինոզվիլու, Իլիա Ճավճավաճեյի, Ակակի Ծերեթելու և մյուսների յերկերը: Լավագույն ստեղծագործությունները նա խորհուրդ եր տալիս կարգալու նաև մեզ, իր ընկերներին, և հաճախ պատմում եր կարգացածի բովանդակությունը: Հիշում եմ, թե ինչպիսի մեծ տպավորություն եր գործել նրա վրա Ի. Նինոզվիլու «Գոգիա Ուիշվիլի» վիպակը, վորի մեջ նկարագրված ե գյուղացիների ճնշված ու իրավագուրկ դրությունը: «Պետք ե սովորել ու սովորել,—ասում եր Իոսիֆը,—վորպեսզի ոգնենք գյուղացիներին»:


Իոսիֆ Ջուղաշվիլին աչքի յեր ընկնում մեծ համեստություն և լավ, զգայուն ընկեր եր: Նա յերբեք զգացնել չեր տալիս իր գերազանցությունը, թեպետ նա ավելի զարգացած եր, քան թե մենք: Նա չեր դուռնացնում նրանով, վոր մեզանից ավելի ընդունակ ե, այլ, ընդհակառակը, ոգնում եր մեզ իր գիտելիքներով, ոգնում եր մեզ նկարել աշխարհագրական քարտեզներ, լուծել խնդիրներ, պատրաստել դասեր:

Իոսիֆը հաստատական ու յեռանդուն եր:

Դրա հետ մեկտեղ զգայունությունն ու հոգատարությունը դեպի ընկերները կազմում եյին նրա բնավորության աչքի ընկնող գիծը:

Այդ հոգատարության մասին ե խոսում թեկուզ հետեվյալ փաստը:

Մի անգամ, քննությունների հենց նախորյակին, յես հիվանդացա ու դիմեցի ուսումնարանի վերակացու Բեյլային, խնդրելով ազատել ինձ քննություններից: Բեյլանը մերժեց: Յես խիստ ընկճված եյի մերժումից: Այդ մասին իմացավ Սոսոն և սկսեց պնդել, վորպեսզի յես իր հետ գնամ Բեյլայեի մոտ, միասին խնդրենք: Յես համոզում եյի նրան այդ մտադրությունից հրաժարվել, հավատացած լի-



ներով, վոր դրանից վոչինչ դուրս չի գա: Այնուամենայ-
նիվ, Սոսոն ինձ համոզեց գնալ Բելյակի մոտ և այնպիսի
վճռականությամբ, համարձակությամբ ու հաստատակամու-
թյամբ սկսեց վերակացույին համոզել, վոր նա զիջեց:

Հաջորդ տարիներին, գանվելով Թիֆլիսի սեմինարիա-
յում, ՄՏԱԼԻՆԸ մասնակցեց ընդհատակյա խմբակներին և
շարունակեց հափշտակվել գրքերի ընթերցանությամբ:

Նա ուսումնասիրում էր յերկրաչափությունը: Այնու-
հետև ձեռնամուխ յեղավ քիմիային: Նա սկսեց կարդալ
Մարքսին: Կազմակերպեց խմբակ և ինքը ղեկավարում էր
այն: Այդ խմբակում ուսումնասիրում էին բանվորական
շարժումը: Այս առթիվ ՄՏԱԼԻՆԸ հաճախ ասում էր, վոր
սկետք է աշխատանք սկսել բանվորների շրջանում:

Թիֆլիսում՝ սեմինարիայում, ՄՏԱԼԻՆԸ առաջվա պես
կենսուրախ ու զգայուն ընկեր էր: Բայց այստեղ, ըստերե-
վույթին, նրա մեջ բեկում կատարվեց:

Նա արդեն այնպես ջանասեր աշակերտ չէր, ինչպես
առաջ: Պարապմունքից ազատ ամբողջ ժամանակը նվիրում
էր քաղաքական գրականության ընթերցանությանը, ու-
սումնասիրում էր մարքսիզմը, բանվորական շարժումը:

Առանձնապես իմ հիշողության մեջ տպավորվեց մի
ուշագրավ փաստ: Դա 1898 թվականին էր: Մի անգամ
առավոտ, թեյից հետո, յես սեմինարիայից դուրս յեկա
Պուշկինյան պարտեզը: Այստեղ յես տեսա ՄՏԱԼԻՆԻՆ,
շրջապատված մի խումբ ընկերներով: Նա ջերմ կերպով
բանավիճում էր նրանց հետ, քննադատում էր Ժորժանիա-
յի հայացքները: Դա բոլորին հափշտակել էր:

Յեվ այստեղ, այդում, մենք առաջին անգամ լսեցինք
«Լենին» բառը:

Հնչեց զանգը, մենք սկսեցինք ցրվել՝ շտապելով դասի:
Յես մոտեցա Իոսիֆին, զարմացած, թե ինչպես խիստ
կերպով է քննադատում նա Ժորժանիայի հայացքները:

Իոսիֆը հաղորդեց, Վոր կարգացել է Լենինի հոգեվաճառները,
վարձեր իրեն չատ դուր են յեկել:

— Յես ինչ գնով ել զինի, պետք է տեսնեմ Լենինին,
ասաց ինձ նա այն ժամանակ:

1898 թվականին ասված այդ խոսքերը յես հիշեցրի
ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ 1926 թվականին նրա հետ հանդիպելիս
և նա մտաբերեց այդ եպիգրաֆը:

Գ. ԳԼՈՒԻԴԻՁԵ

ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՏԱՐԻՆԵՐ

Յես սովորել եմ Գորիի հոգևոր դպրոցում, իսկ այնու-
հետև Թիֆլիսի հոգևոր սեմինարիայում, և այդ տարիներ-
ին հանդիպել եմ ՍՏԱԼԻՆԻՆ:

Հիշում եմ այն հագուստը, վորով ձմռանը Իոսիֆ
Ջուղաշվիլին յերևաց դպրոցում: Նրա հոգատար մայրը,
վորը կյանքի միջոցներ եր հայթայթում ձև անելով, կար
անելով ու սպիտակեղեն լվանալով, ջանք եր թափում,
վորպեսզի վորդին տաք հագնվի և մաքուր:

Իոսիֆը հագած եր կապույտ վերարկու, յերկարաճիտ
կոշիկներ, թաղիքե գլխարկ և գործած գորշ թաթմաններ:
Վիզը փաթաթված եր լայն կարմիր շարֆով: Դուր եր գա-
լիս մեզ նրա պայծառ շարֆը:

Իոսիֆը միջահասակ եր, նիհար: Նա դպրոց եր գա-
լիս ուսից կախած կարմիր չթից պայուսակը: Քայլվածքը՝
փստահ, հայացքը՝ աշխուժ — ինքն ամբողջապես՝ շարժուն,
կենսուրախ:

Առաջին տարիներին, նախապատրաստական բաժան-
մունքներում Խոսիֆը սովորում էր գերազանց, և զնա-
լով ավելի պայծառորեն եյին դրսեվորվում նրա ընդունա-
կությունները, և նա դարձավ առաջին աշակերտներից
մեկը:

Դպրոցին կից կար գրադարան: Յերբ մենք մեծացանք՝
տարվեցինք ընթերցանությամբ: Վարչությունը մեզ այն-
պիսի գրքեր էր տալիս, վորոնք մեր ճաշակով չեյին, և
մենք գրականություն եյինք ճարում Արսեն Կալանդաձեյի
մոտ, վորը գրախանութ ուներ Գորիում: Կալանդաձեյի
մոտ մենք ճարեցինք Ակակի Ծերեթելու, Իլիա Ճավճավա-
ձեյի, Ռ. Երիսթավիի և մյուսների գրքերը, գրքեր, վորոնք
մեզ պատմում եյին այն մասին, վոր աշխարհում կատար-
վում են ինչ-վոր այլ դեպքեր, վոր դպրոցը մեզ համար
խորթ մայր է:


Դասատուների մեծամասնությունը մեր նկատմամբ
ունեցած վերաբերմունքով մեզ ավելի ևս համոզում էր
այդ բանում: Մենք խուսափում եյինք նրանցից և նրանց
մեջ սրտացավություն չեյինք զգում: Մեզ համար պարզ
էր, վոր դպրոցը ձգտում է մեզ դաստիարակել ստրուկներ,
այլ վոչ թե ազատ մարդիկ:

Մենք սովորում եյինք դասերը, պարապում, բայց մեր
աչքից չէր վրիպում այն, վոր դպրոցի պատերի յետեր
թաղնվում է «ինչ-վոր» ուրիշ բան, այն ժամանակ մեզ հա-
մար վոչ պարզ իր գծագրությամբ, սակայն գրավիչ, լու-
ծում պահանջող բան:

Խոսիֆը մյուսներից ավելի լավ էր վերահասու լինում
այդ «ինչ-վոր բանին»:

Յեթե հիշողությունս չի դավաճանում ինձ, այն
գրույցը, վորի մասին յես ցանկանում եմ պատմել, տեղի
ունեցավ, յերբ Խոսիֆը և յես 13 տարեկան եյինք:

Ամառային արձակուրդների ժամանակ, Բերշուետի



ԳՈՐԻ.—Այն սենյակը, ուր իր մանկություն
անցկացրել է անցկացրել ընկեր ՍՏԱՆԻՍԼԱՎ

հայրենի գյուղից Գորի վերադառնալով՝ յես այցելեցի Իոսիֆին և մենք դուրս յեկանք զբոսնելու փողոցում։ Անցանք Քուռ գետի կամուրջը, անցանք յերկաթուղագծից այն կողմը և պառկեցինք կանաչ մարգագետնին։

Լինելով յերիտասարդ, դեռևս կյանքում չփորձված, մենք սիրում էինք զրուցել վերացական թեմաների մասին։ Յես խոսեցի աստծու մասին։ Իոսիֆը լսեց ինձ և բողբոջական լռությունից հետո պատասխանեց.

— Գիտես, մեզ խաբում են, ասում զոյություն չունի։

Այս խոսքերը զարմացրին ինձ։ Դեռևս վոչ վոքից յես այդպիսի խոսքեր չէի լսել։

— Սոսո, ի՞նչ ես ասում դու։

— Յես քեզ մի գիրք կտամ, կարդա և կտեսնես, վոր աշխարհն ու մեր վողջ կյանքը բոլորովին այլ կերպ են կառուցված, և աստծու մասին յեղած խոսակցությունները դատարկ շաղակրատություն ե, — ասաց Իոսիֆը։

— Ի՞նչ գիրք ե դա — հետաքրքրվեցի յես։

— Դարվին։ Անպայման կարդա — խրատական յեղանակով ասաց Իոսիֆը։

* *

Գորիի ուսումնարանից հետո յես նորից հանդիպեցի Իոսիֆ Զուղաշվիլուն Թիֆլիսի հոգեվոր սեմինարիայում։ Ծանր եր ուեթիմն այդ դպրոցում։ Չեր կարելի կարդալ թերթ, գնալ թատրոն, յերեկոյան ժամը հինգից հետո դուրս գալ փողոց։ Անվերջ աղոթքներ՝ դասից առաջ, նախաճաշից առաջ, ճաշից առաջ, քնելուց առաջ։ Շաբաթ և կիրակի օրերին՝ յերկարատեմ, հոգնեցուցիչ պատարագներ։ Խիստ ձանձրացնում էին մեզ։

Աշակերտներին նկատմամբ սահմանված եր հսկողություն ուսուցիչների կողմից։ Կոպիտ հանդիմանությունները, կարգերը (խավար սենյակ), վարքի համար 2 (վատ) թվանշան գնելը և, վերջապես, սեմինարիայից հեռացնելը ծառայում էին իբրև տուժանքի չափեր աշակերտության նկատմամբ։

* * *

Իոսիֆը տարվեց «Լոդմիակի» գրքերի ընթերցանությամբ: Նրա շուրջն էյին հավաքվում ընկերները:

Վորպեսզի ավելի լավ հասկանանք մեզ հետաքրքրող հարցերը, մենք կարդում էյինք Լիպպերտի «Կուլտուրայի պատմութիւնը», Լեվ Տոլստոյի «Պատերազմ և խաղաղութիւնը», «Տերն ու ծառան», «Կրեյցերյան սոնատ»-ը, «Հարութիւն»-ը, Ինչպես և Պիսարեր, Դոստոևսկին, Շեքսպիրը, Շիլլերը և այլն:

Յերբեմն մենք կարդում էյինք յեկեղեցում, ծիսակատարութեան ժամանակ, թագնվելով շարքերում: Մենք գրքերը կարդում էյինք, ի հարկե, մեծ զգուշութեամբ, վորպեսզի վերակացուների աչքին չընկնէյինք:

Գիրքը Իոսիֆի անբաժան ընկերն էր և նրանից անբաժան էր նույնիսկ ուտելու ժամանակ:

Սովորաբար Իոսիֆը հարցերին պատասխանում էր առանց շտապելու: Յեթե նրա մոտ պատրաստ էր բազմակողմանիորեն հիմնավորված պատասխանը, նա պատասխանում էր, իսկ յեթե վոչ, նա պատասխանը հետաձգում էր ավելի կամ պակաս կարճ ժամանակով:

Այն ժամանակ դասավանդվող առարկաներից Իոսիֆը սիրում էր քաղաքացիական պատմութիւնը և տրամաբանութիւնը: Այդ առարկաներից նա միշտ հինգ ունէր: Մնացած առարկաներից նա տարվա վերջն էր պատրաստվում քննութիւններին:

Սեմինարիայի անտանելի հեղձուցիչ մթնոլորտում մեզ համար մեծ զվարճութիւն էյին յերգերը: Արտասովոր բավականութիւն էյինք զգում մենք, յերբ Սոսոն մեզ ներգրավում էր յերգեցիկ խմբում և իր հնչեղ, դուրեկան ձայնով յերգում էր ժողովրդական սիրելի յերգերը:

Դ. ԳՈԳՈՒՍԱ

ՎՈՂՋ ԿՅԱՆՔՈՒՄ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆՍ ՄԵՋ ՄՆԱՅԵԼ ԵՆ ԱՅՆ ՈՐԵՐԸ

Գորի քաղաքը հարավից և արևմուտքից վրդողում են Գուռն ու Լիախվան: Նա շրջապատված է պտղատու այգիներով: Քաղաքում խոյանում են հնադարյան ամրոցի ավերակները—միջնադարի հուշարձանը:

Հին Գորիում կային մոտ 8000 բնակիչներ, շատ յեկեղեցիներ, խանութներ, գինեւոցներ և այն ժամանակվա ամբողջ գավառի համար չորս ուսումնական հաստատութիւն՝ քաղաքային 4-դասյան դպրոց, 4-դասյան հոգևոր դպրոց, ուսուցչական սեմինարիա և կանանց վոչ-լրիվ գիմնազիա:

Այդ քաղաքում, կոշկակար Վիսսարիոն Զուղաշվիլու ընտանիքում 1879 թ. ծնվեց մի աղա, վորին տվին Իոսիֆ անունը:

1890 թվականին, մտնելով Գորիի հոգևոր դպրոցը, յես առաջին անգամ հանդիպեցի տաանեմեկ տարեկան Իոսիֆ Զուղաշվիլուն:

Սուարկաները մեզ մոտ անցնում էին ուսաց լեզվով և շաբաթը միայն յերկու անգամ էլին դասավանդում վրացական լեզուն:

Յես, լինելով մեզրելացի, վրացերեն խոսքերն ակցեն-տով էլի արտասանում, դա առիթ տվեց աշակերտներին ծաղրելու ինձ: Իսկ Իոսիֆը, ընդհակառակը, ինձ ոգնու-թյան յեկավ: Համեստ ու զգայուն, նա մոտեցավ ինձ ու ասաց.

— Դե, արի, յես քեզանից սովորեմ մեզրելական լե-զուն, իսկ դու ինձանից վրացականը:

Ընկերով հոգու այդ շարժումն ինձ խիստ հուզեց:

Իոսիֆն աչքի յեր ընկնում վոչ միայն հասեստու-թյամբ: Նա իր մեծ ընդունակություններով ու հետաքր-քրությամբ առանձնապես աչքի յեր ընկնում աշակերտ-ների շրջանում:

Սովորաբար նա լուրջ էր, հաստատակամ, չէր սիրում չարաճճիություններ և կովարարություն: Պարապմունքնե-րից հետո տուն էր շտապում, և նրան միշտ կարելի յեր աեսնել գիրք կարդալիս:

Իմ քեռի՝ Վիսսարիոն Գոգոթիան, վորի բնակարանում յես ապրում էի, փոխադրվեց Ղիփշիձեյի տունը: Հենց այստեղ, բակում, ապրում էր Իոսիֆն իր մոր հետ միասին:

Նրանց սենյակը 9 քառակուսի արշինից ավելի չէր և գտնվում էր խոհանոցի մոտ: Մուտքը բակից տանում էր ուղղակի դեպի սենյակը, չուներ վոչ մի աստիճան: Հա-տակը շինված էր աղյուսից, փոքրիկ լուսամուտը ժլատու-թյամբ էր լույս ներս թողնում: Սենյակի վողջ կահ-կա-րասիքը բաղկացած էին մի փոքրիկ սեղանից, տաբուրետ-կայից և լայն թախտից, վորը նման էր նարի և ծածկված էր «ճիլոպով» — ծղնոտե խտիրով:

Իոսիֆի մայրը համեստ աշխատավարձ ուներ, զբաղ-վում էր լվացք անելով և Գորիի հարուստ բնակիչների



Ընկեր ՍՏԱԻՆԸ (չորսուրդ վերին սահման) Գորի եղբայրի ուղեկալով:
ուսումնասիրող աշակերտների օրգանում:

Դրանից հետո, պատահելով Բաթումում ինձ, ընկեր
ՍՏԱՆԻՆԸ նշեց մեր թույլ տված մի շարք սխալները,
առանց վորոնց ցույցն ավելի մեծ ու ավելի նշանակալի
կլիներ: Բայց հենց այդպես էլ նա մեծ տպավորություն
գործեց: Բայց չե՞ վոր մինչև ընկեր ՍՏԱՆԻՆԻ Բաթումի
գալը, մենշևիկները քարոզում էին, վոր վոչ միայն շրջակա
գյուղերում, այլև հենց Բաթումում վոչ մի հեղափոխա-
կան շարժում հնարավոր չէ:

Դրանից հետո յես մի քանի անգամ առիթ ունեցա
հանդիպելու ընկեր ՍՏԱՆԻՆԻ: Բանվորները շատ էին
սիրում նրան, և յեթե տեղեկություն եր ստացվում, թե
վորևե տեղ յենթադրվում ե նրա յելույթը, ապա այնտեղ
մեծ բազմություն եր հավաքվում: Հիշում եմ նրա յելույթի
հաջողությունը Ճիաթուրայում, վորտեղ նա մերկացրեց
մենշևիկներին:

Նա, ով գեթ մի անգամ հանդիպել ե ընկեր ՍՏԱՆԻՆԻ,
յերբեք չի մոռանա նրա համեստությունը, իմաստությունը,
դեպքերն արագ ըմբռնելու և ճիշտ, պարզ ցուցումներ
տալու հմտությունը, չի մոռանա նրա խորաթափանցու-
թյունը, մարդու մեջ իր վողջ կյանքում բանվոր դասա-
կարգի գործին անձնուրաց նվիրվածություն դաստիարա-
կելու հմտությունը, անհաշտ վողականությունը հեղափո-
խության բոլոր թշնամիների նկատմամբ:

Գ. Ի. ՅԵԼԻՍԱԲԵԴԱՇՎԻԼԻ

ՏԱՐԻՆԵՐՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒԹ

Թբիլիսիի կուսակցական ակտիվի ժողովում ընկեր Բերիայի տված զեկուցումը՝ «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» իմ հիշողության մեջ վերականգնեց առանձին եպիզոդներ այն պայքարի, վոր անցել են Անդրկովկասի բոլշևիկները ընկեր ՍՏԱՆԻՆԻ ղեկավարությամբ՝ ցարիզմի ու բուրժուազիայի դեմ, բանվոր դասակարգի դավաճանների՝ մենշևիկների, նացիոնալիստների, բոլոր գույնի ոպորտունիստների դեմ մղած պայքարում:

Ընկեր ՍՏԱՆԻՆԻՆ յես հիշում եմ պատանի տարիներեց, վորպես Գորիի հոգևոր դպրոցի աշակերտ, դպրոց, ուր սովորում էյի նաև յես: Նա ամենաչքավոր, և ամենաընդունակ աշակերտներից մեկն էր:

Նա պարապում էր ինձ հետ, պատրաստելով ինձ սեմինարիա մտնելու համար: Զրուցելով հեղափոխական շարժման հարցերի շուրջը, նա ինձ պատրաստում էր նաև քաղաքական պայքարի համար:

Նա հաճախ էր հանդիպում գյուղացիներին և զրուցում էր նրանց հետ:

Հիշում եմ մի այսպիսի դեպք:

Մի անգամ ճանապարհով գնալիս, մենք տեսանք դաշտում հանգստացող վար անողներին:

— Սբի, գնանք նրանց մոտ, — առաջարկեց ընկեր ՍՏԱՆԻՆԸ:

Մենք մոտեցանք:

Տեսնելով, թե գյուղացիներից մեկն ինչ ախորժակով է ուտում հաց ու լոբի, ընկեր ՍՏԱՆԻՆԸ հարցրեց.

— Ինչո՞ւ այդպես վատ եք սնվում: Ձե՞ վոր դուք եք հերկում, ցանում, հավաքում բերքը: Նշանակում ե, կարելի չե ավելի լավ ապրել:

Գյուղացին դրան պատասխանեց.

— Հավաքելը, մենք ինքներս ենք հավաքում, բայց պրիստավին պետք է տալ, տերտերին պետք է տալ: Ի՞նչ է մնում մեզ:

Այսպես սկսվեց զրույցը, վորի ընթացքում ընկեր ՍՏԱՆԻՆԸ սկսեց քայլ առ քայլ բացատրել, թե ինչու չե գյուղացին վատ ապրում, ով է նրա հաշվին հարստանում, ովքեր են նրա բարեկամները և ովքեր նրա թշնամիները: Նա խոսում էր այնքան հասկանալի ու գրավիչ կերպով, վոր գյուղացիները խնդրեցին նրան ելի գալ ու խոսել իրենց հետ:

Սեմինարիայում գտնվելով, նա հաճախ իր հետ բերում էր անլեզալ գրականություն: Սեմինարիայի տեսուչ՝ կուսակրոն Դիմիտրին ցանկանում էր ինչ գնով ել լինի

բռնել ՄՏԱԼԻՆԻՆ գրականությունը ձեռքին: Բայց ընկեր ՄՏԱԼԻՆԻՆ այնքան հմտորեն եր պահում գրականությունը, վոր յերկար ժամանակ կուսակրոն Դիմիտրիին վոչ մի կերպ չեր հաջողվում այդ բանը: Այնուամենայնիվ մի անգամ նա զաղտնագողի մոտեցավ Սոսոյին, յերբ նա անկեղալ գիրք եր կարդում: Նա ճարպկորեն խլեց գիրքը Սոսոյից, բայց Սոսոն իսկույն յետ խլեց գիրքը:

Կուսակրոն Դիմիտրին զայրացավ.

— Դու միթե՞ չգիտես, թե ում հետ գործ ունես:

Սոսոն աչքերը տրորեց, խիստ ուշադիր կերպով նայեց նրան և պատասխանեց.

— Իմ առջև տեսնում եմ մի սև բիծ և ուրիշ վոչինչ:

ՄՏԱԼԻՆԻ ցուցումով և ղեկավարությամբ մենք կազմակերպեցինք աշակերտական սոցիալ-դեմոկրատական կոմիտե:

Խմբակներում, վոր միավորում եր այդ կոմիտեն, հաշրվում եյին 100—125 հոգի: Նրանք մոլծում եյին անդամավճարներ (ամսական 10—20-ական կոպեկ) և իմ միջոցով հանձնում եյին կուսակցական կոմիտեյին:

Այս հուշերը միշտ կապրեն իմ հիշողության մեջ:

Ո. ԻՆԺԵՐԱԲՅԱՆ

ՄՏԱԼԻՆՅԱՆ ԿՐԱԿՈՏ ԻՈՍԲԵՐԸ

Լուրն այն մասին, թե մարտի 8-ի զիշերը վոստիկանությունը Ռոտշիլդի գործարանում ձերբակալել ե մի խումբ բանվորների, արագ կերպով տարածվեց Բաթումի ձեռնարկություններում:

Յես այն ժամանակ աշխատում եյի Խաչատուրովի գործարանում: Հիշում եմ, թե ինչպես այդ լուրը հուզեց մեր բանվորներին:

Մեզ չեյին կարող զարմացնել վոչ մի վերավորանք, վոր գործարանում հասցնում եյին բանվորներին, վոչ մի զրկանք: Բայց այստեղ մեր մի քանի տասնյակ ընկերներին վոստիկանությունը ձերբակալել եր՝ ետապով աքսորելու միմիայն այն բանի համար, վոր նրանք համարձակվել եյին պահանջել աշխատանքի պայմանների և կյանքի մի վորոշ բարելավում:

Թաշատուրովի գործարանի բանվորներին վրդովմունքն անսահման էր: Հարկավոր էր մի փոքրիկ կայծ, վորպեսզի բոց վառի, վորպեսզի ստիպի բանվորներին բարձր ձայնով հայտնելու ընկերների հետ ունեցած իրենց համերաշխու-թյան մասին:

Յեվ յերբ մեզ, յուրաքանչյուրիս առանձին հաղորդե-ցին, թե վաղը, մարտի 9-ին ցույց ե կազմակերպվում ձերբակալվածներին ազատելու համար, մենք վորոշեցինք Բաթումի մյուս գործարանների բանվորներին հետ փողոց դուրս գալ:

Մենք այն ժամանակ դեռ չգիտեյինք, վոր այդ ցույցը կազմակերպել ե ընկեր ՍՏԱԼԻՆԸ: Բայց ըստ այնմ, վոր-քան արագ կերպով մեզ հաղորդեցին ցույցի մասին, թե ինչպես ե նա պատրաստվում, մենք հասկացանք, վոր դրան ղեկավարում ե շատ ուժեղ, փորձված կազմակեր-պիչ, վորը բոլորից լավ գիտե դեպի ուր ե ինչպես տա-նել գործը...

1902 թվականի մարտի 9-ի ցույցը յես յերբեք չեմ մոռանա: Բանվորների հսկայական մասսաները փակել էին առաքման գորանոցները տանող փողոցը, այն գորանոց-ները, վորտեղ գտնվում էին ձերբակալված բանվորները: Բանվորների խմբի առջևից ցույցի ժամանակ գնում եր ընկեր ՍՏԱԼԻՆԸ:

Ցույցը ընդհուպ մոտեցավ զինվորներին, վորոնք պատ-րաստ բռնել էին դեպի մեզ ուղղված հրացանները:

Նրանց պետը, սպա Անթաձեն, պահանջեց, վորպեսզի ցույցը ցրվի, այլ կերպ ինքը կհրամայի կրակել:

Սկզբում մի քանի բանվորներ, վորոնց թվում նաև յես, տատանվեցին: Սակայն ցուցարարները լսեցին բարձր ձայն, վորը մեզ կոչ եր անում չցրվել, ավելի ես վճռակամորեն պահանջել ձերբակալվածներին ազատել:

Այդ կոչով դիմեց ցուցարարներին ընկեր ՍՏԱԼԻՆԸ:

Նրա կրակոտ խոսքերը ցեմենտի շաղախի պես ամրացրին ցույցը, ե վոչ վոք չհեռացավ:

Ընդհակառակը, շատ բանվորներ սկսեցին քարեր նե-տել սպայի ե զինվորների վրա, վճռապես պահանջելով ազատել ձերբակալվածներին:

Այդպես, յես առաջին անգամ տեսա ե լսեցի ընկեր ՍՏԱԼԻՆԸ:

Մարտի 9-ի ցույցը շատ բան սովորեցրեց Բաթումի բանվորներին: Բանվորներին հանդիպեցին սվիններով, ցույ-ցի վրա կրակեցին: Ճիշտ ե, շատ զինվորներ կրակում էին ողում, չցանկանալով սպանել իրենց դասակարգային յեղ-բայրներին, սակայն յերկրորդ համազարկից հետո ընկավ իմ կողքից գնացող գործարանային իմ ընկեր՝ մամլոդ Երմիլի Կոպալեյշվիլին: Ցարական սատրապները նրան սպանեցին այդ ժամանակ այնպես, ինչպես սպանեցին նաև 13 բանվորի ե վիրավորեցին մի քանի տասնյակ բան-վորներին:

ՍՏԱԼԻՆԻ կազմակերպած ե ղեկավարած այդ ցույցը մի ավելորդ անգամ մեզ համոզեց, վոր միայն ինքնակա-լության դեմ գենքը ձեռքին վճռական պայքարը աշխատա-վորներին կտանի դեպի հաղթանակը:

Մի ուրիշ անգամ յես ընկեր ՍՏԱԼԻՆԸ տեսա արդեն 1905 թվականի սկզբին, յերբ յես աշխատում էյի Ման-թաշևի 2-րդ գործարանում: Այդ հանդիպումն այսպես պատահեց:

Կարճ ընդմիջումի ժամանակ, վոր մեզ տրվում եր ճաշելու համար, ճաշարանում հավաքվեցին շատ բան-վորներ:

Ճաշարան մտա նաև յես: Սենյակի անկյունում մի ինչ-վոր յերիտասարդ մարդ բարձր ձայնով վիճում եր մի մենշևիկի հետ: Աստիճանաբար վիճողների շուրջը հավաք-վեցին բոլոր բանվորները: Յես իսկույն չճանաչեցի ընկեր

ՄՏԱԼԻՆԻՆ (ցույցի ժամանակ յետ հեռու ելի նրանից և չկարողացա լավ տեսնել), բայց ձայնն ինձ ծանոթ թվաց։ Յետ հարցրի մի ընկերոջ, թե ով է դա։

— Դա Սոսոն է, բանվորների ղեկավարը, — պատասխանեց նա ինձ։

Դա ընկեր ՄՏԱԼԻՆԵՆ էր, վորը 1904 թվականին փախել էր աքսորից։

Ընկեր ՄՏԱԼԻՆԻՆ բազմաթիվ բանվորներ այն ժամանակ արդեն լավ էլին ճանաչում։ Նրա մասին խոսում էլին, վորպես բանվորների իսկական ղեկավարի և ուսուցչի, նրանց շահերի տոկուն պաշտպանի։

Վիճելով մենչևիկի հետ, ընկեր ՄՏԱԼԻՆԸ մերկացնում էր նրա ուլորտունիստական հայացքները, խոսում էր բանվոր դասակարգի պայքարի մեթոդների մասին, ցույց էր տալիս, վոր բանվոր դասակարգը հեղափոխության առաջնորդն ու ղեկավարն է և նրա նպատակն է ինքնակալության և կապիտալիստական կարգի բռնի տապալումը։

Ի պատասխան ընկեր ՄՏԱԼԻՆԻ խոսքերի, բանվորները գլխի շարժումով հավանություն էլին տալիս։ Վեճի վերջում ճաշարանում գտնվող բոլոր բանվորները խմբվեցին ընկեր ՄՏԱԼԻՆԻ շուրջը, վորի խոսքերը մոտ ու հասկանալի էլին յուրաքանչյուրին։

Ընկեր ՄՏԱԼԻՆԻ այս այցելությունը Մանթաշեի գործարան, խոր հետք թողեց մեր բանվորների ամբողջ կյանքում։ Վորոշ ժամանակ անց, հետևելով ընկեր ՄՏԱԼԻՆԻ խորհրդին, մենք գործադուլ անցկացրինք, վորը վերջացավ բանվորների հաղթությամբ։

Բանվորական շարժման արշալույսին Անդրկովկասում ընկեր ՄՏԱԼԻՆԸ բանվորներին ցույց էր տալիս, վոր միայն իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով նրանք կկարողանան ազատ կյանք ձեռք բերել, առանց շահագործման, առանց կարիքի և զրկանքների։ Յեվ այժմ, յերբ կարդում



«Ընկեր ՄՏԱԼԻՆԸ 1905 թ. ձիաբուրսայում կայացած միջոցում մերկացնում է մենչևիկիստին»։
Նկարիչ Ս. Նադարեթյանի ձեռագիրը։

Ես ԽՍՀՄ Ստալինյան մեծ Սահմանադրութիւնը, ավելի
մեծ սիրով ու անձնվիրութեամբ ես համակվում դեպի բոլ-
շևիկյան կուսակցութիւնը, դեպի մեծ ՍՏԱԼԻՆԸ, վորը
պատմական մարտերում դարձնեց աշխատավորների յեր-
ջանկութիւնը:

Յեա արդէն 64 տարեկան եմ, վորից ավելի քան 50
տարին անցել է աշխատանքի մեջ՝ Բաթումի ձեռնարկու-
թիւններում: Յեա յերջանիկ եմ, վոր ապրեցի մինչև այն
որերը, յերբ իրագործվեցին մեր լավագույն իղձերը: Մարդ
ցանկանում է ապրել ու ապրել, վորպեսզի մասնակցի
Լենինի-ՍՏԱԼԻՆԻ գործի նոր հաղթանակների համար մըզ-
վող պայքարին:

Ի. ԴԱՐԱԽՎԵԼԻՁԵ
ՅԵՎ
Դ. ՎԱԴԱՉԿՈՐԻԱ

**ԲԱԹՈՒՄԻԻ
ԸՆԴՀԱՏԱԿԸ**

Հին բանվոր Իլլարիոն Միխայլովիչ Դարախվելիձեն
պատմում է.

«Մինչև ընկեր ՍՏԱԼԻՆԻ Բաթումի գալը յես 1899—
1900 թ. թ. աշխատում եյի Մանթաշեվի գործարանում,
համարվում եյի առաջավոր բանվոր, կանոնավոր կերպով
հաճախում եյի կիրակնորյա դպրոցը: Այդ կիրակնորյա
դպրոցում մեզ սովորեցնում եյին գրագիտություն և
տիեզերաշինություն—ինչ ձև ունի յերկիրը, ինչպես է նա
պտտվում իր առանցքի և արևի շուրջը, ինչքան են յերկ-
րից հեռու լուսինն ու արևը, ինչ է մոլորակը և այլն:

Նոյեմբերի վերջին յես մի անգամ հանդիպեցի Կոժիա
Կանդելակիին: Նա ինձ հաղորդեց, վոր Թիֆլիսից պրոպա-
գանդիստ է յեկել և ցանկանում է մի քանի զրույց անց-

կացնել բանվորների հետ: Ընկ. Կանդելակին խնդրեց ինձ
ընտրել մի խումբ առաջավոր բանվորների և մյուս որը
յերեկոյան հավաքվել ընկ. Դոմենտի Վադաշկորիայի տանը:

Նշանակված ժամանակ մենք՝ բոլորս, բանվորներս, հա-
վաքված եյինք: Յեկավ Կանդելակին և իր հետ բերեց մի
յերիտասարդ: Դա ընկեր Սոսոն էր, ՍՏԱԼԻՆԸ:

Ընկեր Սոսոն շատ կարգացած պրոպագանդիստ էր
և առաջին իսկ խոսքերից գրավեց մեր ուշադրությունը:

Յեվ ինչպես չգրավեր:

Այնպիսի հետաքրքրական բաների մասին եր նա պատ-
մում, խոսում էր այնքան համոզեցուցիչ և պայծառ կեր-
պով, վոր կարելի չէր նրան անվերջ լսել: Այն, ինչի մա-
սին խոսում էր ընկեր Սոսոն, մեզ համար նորություն էր,
այդպիսի բաներ մենք առաջ յերբեք չէյինք լսել:

Առաջին անգամ մենք նրանից լսեցինք հասարակու-
թյան դասակարգերի մասին, իմացանք, վոր պայքարելով
իրենց կեղեքիչների դեմ, բանվորները առաջին հերթին
պետք է պայքարեն գոյություն ունեցող կարգը տապալե-
լու համար:

Անհրաժեշտ է նշել, վոր ընկեր Սոսոն մեծ կոնսպի-
րատոր էր: Մենք ամեն անգամ հավաքվում եյինք նոր
բնակարանում:

Ձի յեղել դեպք, վոր ընկեր ՍՏԱԼԻՆԸ բաց քողներ
պարապմունքը. մեծ նշապահուքյամբ նա գալիս էր
ուղիղ նշանակված ժամանակին յեվ առանց ավելորդ
խոսքերի ձեռնարկում էր գործին, քանզի գնահատելով յեվ
իր յեվ ուրիշների ժամանակը:

Առաջին իսկ պարապմունքին նա մեզ առաջարկեց
բանվորներից 20-ական կոպեկ հավաքել «գործադուլների
դեպքում բազմաճանաչ ընտանիք ունեցող բանվորներին ոգ-
նելու համար»: Նրա այդ առաջարկությունը մեզ բոլորիս
զուր յեկավ: Այնուհետև անդամավճարներ դանձելն արդեն

սխտեմ դարձավ. ամեն ոռճիկ ստանալիս, մենք կազմա-
կերպության գանձապահին վճարում եյինք Ձ-ական տո-
կոսը:

1902 թվականի հունվարից ընդհուպ մինչև իր ձեր-
քակալությունը ընկեր ՍՏԱԼԻՆՆ ապրում եր մեր տանը:
Յես հնարավորություն ունեյի լավ դիտելու ընկեր
ՍՏԱԼԻՆԻՆ, մոտիկից ճանաչելու նրան:

Գրեթե որ չեր անցնում, վոր իրիզնապահին ընկեր
ՍՏԱԼԻՆԸ չչտապեր խմբակի պարապմունքի: Յերբեմն մեկ
որում նա հասցնում եր պարապմունքներ անցկացնել յեր-
կու խմբակում:

Հետևելով նրա աշխատանքային որվան, յես զարմա-
նում եյի նրա յեռանդի վրա: Ինձ թվում եր, վոր նա
հանգստանում եր միայն թեյի կամ ճաշի ժամանակ: Մնա-
ցած ժամանակ, ընդհուպ մինչև խոր գիշերը, պարապում
եր՝ կարդում, շատ գրում և նշանակված ժամանակին
խմբակի պարապմունքի գնում:

1902 թվականի հունվարին ընկեր ՍՏԱԼԻՆԸ մի քա-
նի որով գնաց Թիֆլիս: Բանից դուրս յեկավ, վոր նա Թիֆ-
լիս ե գնացել տպագրական գազզյահի և յերեք լեզուներով՝
ռուսերեն, վրացերեն, հայերեն տառեր ձեռք բերելու:

Ռոտշիլդի գործարանի բանվորների ոգնությամբ գազ-
զյահը հավաքվեց և «արտադրությունը» լրիվ կերպով գոր-
ծի դրվեց: ՍՏԱԼԻՆԸ թուղթիկներ եր գրում, վոմն Գեոր-
գի (ազգանունը չեմ հիշում) շարում եր, իսկ մենք բոլո-
րըս ՍՏԱԼԻՆԻ հետ միասին տպագրում եյինք, հերթով
պատեցնում եյինք մամուլի անիվը:

Ընկեր ՍՏԱԼԻՆԻ անմիջական ղեկավարությամբ կազ-
մակերպվեց և փայլուն կերպով անցկացվեց Մանթաշեվի
գործարանի բանվորների գործադուլը: Մենք այն ժամա-
նակ հասկացանք, վոր ընկեր ՍՏԱԼԻՆԻ խոսքը չի տարբեր-
վում գործից և վոր նա վոչ մի ընդհանուր բան չունի այն
ռուսացիների և պրոպագանդիստների (ապագա մենշևիկ-

ների) հետ, վորոնք նրանից առաջ մեզ սովորեցնում եյին
միայն աշխարհագրություն, աստղաբաշխություն: Մենք
հասկացանք, վոր ընկեր ՍՏԱԼԻՆԻ ղեկավարությամբ կա-
րելի յե շատ ավելի նշանակալի և խոշոր հաղթանակներ
ձեռք բերել, քան հաղթանակը մեկ գործարանատիրոջ դեմ:

Յեվ մենք ջերմորեն սիրեցինք մեր Սոսոյին:

Սակայն վոստիկանությունն ու ժանդարմերիան շարժ-
վեցին:

Բաթումի բանվորների բոլոր «անկարգություննե-
րում» նրանք զգացին ինչ վոր մեկի փորձված ձեռքը: Սկը-
սեցին վորոնել հանցավորին և Բաթումի բանվորների «խառ-
նակչին» և ահա ապրիլի 5-ին իմ բնակարանում ձերբա-
կալեցին ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ, Կոծիա Կանդելակիին և իմ
յեղբորը՝ Դարիսպանին:

Գիտենալով, վոր մենք, նրա խմբակի մասնակիցներս,
մնացինք առանց ղեկավարի, գիտենալով նաև, վոր կփոր-
ձեն մեզ իրենց ձեռքը գցել կիրակնորյա դալոցի մեր
նախկին ուսուցիչները, — ընկեր ՍՏԱԼԻՆԸ կապերը չխզեց
մեզ հետ և մեր աշխատանքին ուղղություն եր տալիս
բանտից:

Բաթումում ընկեր ՍՏԱԼԻՆԻ կատարած աշխատանքը
հեղափոխականացրեց Բաթումի բանվորների ամբողջ մաս-
ային և նրան վոտքի հանեց պայքարելու ցարիզմի դեմ:
Իր այն ժամանակվա վողջ աշխատանքում ընկեր ՍՏԱԼԻՆԸ
ցույց տվեց հմուտ պրոպագանդիստի, պրոլետարիատի
կազմակերպչի հատկություն: Ընկեր ՍՏԱԼԻՆԸ պրոլետարի-
ատին դաստիարակում եր անձնուրաց նվիրվածության
վողով՝ պրոլետարական հեղափոխության գործին:

* *

Բաթումի բանվոր Դոմենտի Ալմասխանովիչ Վադաչ-
կորիան պատմում ե.

«Յես 14 տարեկան եյի, յերբ, կարիքից հալածված,
Լանչխութի շրջանից յեկա Բաթումի վաստակ վորոնելու:

19 տարեկան հասակում յես մտա Մանթաշեվի նավթի լցման գործարանը: Ծանր եր այն ժամանակ աշխատել գործարանում: Առավոտյան ժամը 6-ից մինչև յերեկոյան ժամը 8—10-ն եր տեղում մեր բանվորական ուրը: Մեզ առանձնապես նեղում էյին տուգանքները, աշխատանքից մի քիչ ուշանում ես՝ տուգանք, այնպես չարիւր, ինչպես պետք է՝ տուգանք, առարկեցիր վարպետին՝ տուգանք: Մի խոսքով, մեզ տուգանում էյին նաև առանց վորևե առիթի: Աշխատավարձից վոչինչ չեր մնում...

Մեր ծանր կյանքում մի վորոշ բազմազանությունն մտցրեց այն ժամանակ Բաթումում գոյություն ունեցող կիրակնորյա դպրոցը: Հաճախելով այդ դպրոցը, մենք, բանվորներս, կարողանում էյինք այստեղ սրտներս թեթևացնել, միմյանց հետ խոսել մեր կարիքների մասին, չվախենալով տուգանվելուց, իսկ դպրոցում մեզ սովորեցնում էյին ամեն ինչ, բացի գլխավոր բանից—ինչպես բարելավել մեր գրությունը, մեր ծանր կյանքը:

Հիշում եմ առաջին հանդիպումը ՄՍԱԼԻՆԻ հետ: Դա 1901 թվականի նոյեմբերի վերջին եր (ամսաթիվը չեմ հիշում):

Մի անգամ յես փողոցում հանդիպեցի Կոժիա Կանդելակիին: Նա ինձ առաջ, վորպեսզի յես ընտրեմ մի բանի առաջավոր բանվորներին և հրավիրեմ ինձ մոտ տանը՝ մի շատ հետաքրքրական գրույցի, վորն անց է կացնելու Թիֆլիսից յեկած մի ուսանող:

Հենց մյուս ուրը յերեկոյան իմ փոքրիկ սենյակը լցված եր Մանթաշեվի գործարանի բանվորներով:

Կոժիա Կանդելակիին հետ միասին յեկավ մի յերիտասարդ, վորը, ինչպես հետո պարզվեց, ընկեր ՄՍԱԼԻՆԵ եր:

Յես այժմ կենդանի կերպով հիշում եմ, թե ինչպիսի զրավիչ բաների մասին եր խոսում նա:

Ունկնդրելով ընկեր Սոսոյին, մեր աչքերը կարծես թե բացվեցին:

Նա մանրամասն ու համոզեցուցիչ կերպով բացատրում եր մեզ, վոր բանվորներն արտադրում են ամեն ինչ, բայց իրենք վոչինչ չունեն, վոր մեր շահերը ուղղակի հակադիր են բուրժուազիայի շահերին, վոր վոչ մի բարելավում չի լինի այնքան ժամանակ, քանի դեռ մենք, բանվորներս, միանալով, չենք տապալի ցարին:

Նման վոչ մի բան մենք վոչ վորից չեյինք լսել:

Ընկեր ՄՍԱԼԻՆԸ մեզնից ամեն մեկին պարտավորեցրեց խմբակի մեջ ներգրավել ուրիշ հուսալի բանվորների: Դրանից բացի, նա պահանջում եր, վորպեսզի մենք մեր կողմից գործարանում անցկացնենք նույնպիսի գրույցներ մնացած բանվորների հետ, ինչպիսին իմքը անց եր կացնում մեզ հետ:

Հետաքրքրությունը դեպի գրույցներն այնքան մեծ եր, վոր մենք միշտ անհամբերությամբ սպասում էյինք խմբակի պարավանների ուղևոր:

Հեղափոխական գաղափարների պրոպագանդը Մանթաշեվի բանվորների մեջ իզուր չանցավ: Բանվորները վոգով արիացան, իրենց ավելի ուժեղ զգացին, ամուր և պատրաստ էյին հեղափոխական գործողության:

ՄՍԱԼԻՆԻ ղեկավարությամբ մենք կազմակերպված կերպով գործարանի ագմինիստրացիային ներկայացրինք սկզբում խիստ համեստ պահանջներ՝ գիշերային աշխատակրում խիստ համեստ պահանջներ՝ գիշերային աշխատանքից հրաժարվել, ամեն շաբաթ հանգստյան մեկ ուր, առախան մեր այդ պահանջների, ագմինիստրացիան ճշմարտության գիմեց, բանվորների մի մասին արձակեց, վոմանց շումներին գիմեց, բանվորների մի մասին արձակեց, վոմանց ձերբակալել տվեց և այլն: Այս բանին մենք պատասխանեցինք գործադուլով: Ծնողմներով վոչնչի չհասնելով, 10 ուրից հետո ագմինիստրացիան ցանկություն հայտնեց բանակցությունների մեջ մտնել մեզ հետ:

Ընկեր ՄՍԱԼԻՆԸ, վորն ամբողջ ժամանակ ղեկավարում եր մեր գործադուլը, մեզ առաջարկեց լրացուցիչ

կերպով պահանջների մեջ մտցնել հետևյալ կետերը. վճարել հարկադրյալ սրբապուրգը, վերադարձնել բանվորներին գանձված տուգանքներից գոյացած ամբողջ գումարը և անցկացնել աշխատավարձի 30 տոկոսի հավելում:

ՄՏԱԼԻՆԸ խրախուսում էր բանվորներին, հավաստիացնելով, Վոր աղմկնիստրացիան ստիպված կլինի զիջումների գիմել: Այդպես էլ յեղավ: Մենք շահեցինք գործադուլը, լիակատար հաղթանակ ձեռք բերինք կապիտալիստի նկատմամբ:

Այս շատ նշանակալի գեպը՝ բանվորների հաղթանակը կապիտալիստի նկատմամբ՝ առանց հետևանքների չլինաց:

Մանթաշելի բանվորների հաղթանակի լուրը գործարանատիրոջ նկատմամբ արագ կերպով թռավ Բաթումի բոլոր ձեռնարկությունները: Ռոաշիլդի, Սիգերիդիսի և մյուս գործարանների բանվորներն սկսեցին հուզվել, ներկայացնելով տերերին քաղաքական և տնտեսական պահանջներ:

Մի ուրիշ անգամ, իմ բնակարանում, քննարկվում էր Ռոաշիլդի գործարանի ձերբակալված 32 բանվորներին ազատելու հարցը: Դեռ ցերեկը, նահանգապետը խոստացավ բանվորների ցույցին, Վորը կազմակերպել էր ընկեր ՄՏԱԼԻՆԸ, Վաղը, այսինքն մարտի 9-ին ազատել բանվորներին: ՄՏԱԼԻՆԸ, ինչպես միշտ, չէր հավատում ցարական սատրապներից՝ բղխող և Վոչ մի խոստման, և այդ պատճառով մեզ առաջարկեց յերեկոյան հավաքվել խոսելու և նշելու Վաղվա գործողությունների կարգը:

Յես ու Գեորգի Մելուան ասում էինք, թե քանի Վոր նահանգապետը խոստացել է, կկատարի իր խոսքը և իրոք կազատի բանվորներին:

Բոլորովին այլ կարծիքի յեր ընկեր ՄՏԱԼԻՆԸ:

Նա առաջարկում էր Վաղը ավելի ազդու ցույց կազմակերպել, քան այդ յեղավ այսոր, և ուժով ազատել ձերբակալված բանվորներին:

Յես առարկեցի ցույցի դեմ, ձերբակալվածներին բռնի կերպով ազատելու դեմ, հենվելով նահանգապետի «ազնիվ խոսքի վրա»: Այդ ժամանակ ընկեր ՄՏԱԼԻՆԸ բարկացավ և ինձ ասաց.

«Ի՞նչ յերբեք հեղափոխական չես լինի»:

Նահանգապետը, բանվորներին ազատելու փոխարեն, մեզ զիմավորեց գնդակների կարկուտով:

Մարտի 9-ի գոհերի թաղումը ընկեր ՄՏԱԼԻՆԸ ոգտագործեց ավելի ևս բորբոքելու համար բանվորական մասսաների ատելությունը ինքնակալության դեմ: Դա հոյակապ քաղաքական ցույց էր:

Մարտի 9-ի դեպքերի առթիվ ընկեր ՄՏԱԼԻՆԸ գրեց մի թուղցիկ, Վորը մեծ դեր խաղաց նաև ամբողջ Արևմտյան Վրաստանի գյուղացիությունը հեղափոխականացնելու գործում:

Այդ ժամանակից անցել է մի քանի տասնյակ տարի, բայց մենք, Բաթումում ընկեր ՄՏԱԼԻՆԻ բուռն հեղափոխական գործունեյության կենդանի վիաներս, միշտ սիրով ենք հիշում սիրելի ուսուցչի, առաջնորդի և մեր հոգատար բարեկամի դեմքը:

ՎԵՐԱ ԼՈՄՋԱՐԻԱ

ՍՏԱԼԻՆԸ ՄԵՐ ՄԵՋ ԴԱՍՏԻԱՐԱԿԵՑ ԱՐԻՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԱՏԵԼՈՒԹՅՈՒՆ ԴԵՊԻ ԹՇՆԱՄԻՆ

Իրիկնադեմ եր: Սիլվիստրոն թու՛ն յեկավ յերկու
ընկերների հետ միասին:

— Քույրիկ, — ասաց նա ինձ, — մենք պետք է սրանց
ապահով տեղ տեղավորենք:

Համարյա մեր բոլոր սենյակները զբաղված էին բան-
վոր կենողներով: Մի ազատ սենյակ էր մնում, յերկուսին
եւ այնտեղ տեղավորեցինք:

Մեր ուշադրությունն իր վրա յեր զբաղվում յերեսը
բաշտողով ծածկած անձանոթը: Նա իրեն պահում էր
ուղիղ, և նրա հայացքը սրաթափանց էր:

Նրան կանչում էին Սոսո: Մյուս ընկերոջը՝ Կոծիա:
Նա գեկտեմբերի վերջերին էր:

Վրա հասավ իննը հարյուր յերկու թվի նախորդակը:
Արտասովոր յերեկո յեր: Ընկեր Սոսոն սպասում է գոր-
ծարանի բանվորներին — վստահելի և հավատարիմ ըն-
կերներին:

Իմ յեղբայր Պորֆիրին և նրա հետ ելի յերկու հոգի
հսկում են ճանապարհը: Մեր շուրջն անտառ է, լուսթյուն
է տիրում: Վոչ հեռվում կա ելի մի տուն:

Հավաքվել են բանվորները: Իբր թե զիմավորում ենք
նոր տարուն, բայց ճառերն արտասովոր են:

Խոսում է ընկեր Սոսոն: Յեւ հենց առաջին խոսքե-
րից նա գրավում է բոլորիս: Նա խոսում է այն մասին,
թե ինչպես բանվորները պետք է պաշտպանեն իրենց
իրավունքները:

Այդ բոլորն առանձնապես նոր էր մեզ՝ կանանց հա-
մար, բայց ընկեր Սոսոն հետո մեզ ևս ներգրավեց աշխա-
տանքի մեջ:

Այն գիշեր նա յերկար զրուցեց բանվորների հետ:
Նրանցից յուրաքանչյուրը պետք է ընկերներ ընտրեր,
կազմակերպեր:

Հաջորդ անգամ Սոսոն ժողովն անցկացրեց գերեզմա-
նատանը: Շատ ժողովուրդ էր հավաքվել: Բոլորն էլ գոր-
ծարանների բանվորներ էին:

Գիշեր էր:

Ընտրեցինք հարմար տեղ:

ՍՏԱԼԻՆԸ խոսեց յերկար ու ջերմորեն: Բանվորները
սերտորեն համախմբվեցին ընկեր Սոսոյի շուրջը, լարված
ունկնդրելով նրա բոցաշունչ խոսքերը:

Ստալինյան թռուցիկները տարածվում էին բանվո-
րական խիտ մասսաների մեջ: Նրանք ձեռքից-ձեռք էին
անցնում, և նույնիսկ նրանք, վորոնք ժողովին ներկա
չէին, համակվեցին կապիտալիստների դեմ մղվող պայ-
քարի համար իրենց ուժի գիտակցությամբ:

Միտինգից հետո, հաջորդ օրը, յետ գերեզմանատուն գնացի, ինչ եւս տեսնում — Իլլարիոն Կաշախմաձեյի կինը՝ Ագատին հավաքում է գլանակների մնացորդները՝ թղթերը, ավելում է յերեկվա ժողովի հետքերը:

Ընկեր Սոսոն հենց առաջին օրերից սովորեցրեց բանփոխներին զաղտնապահութիւն, սովորեցրեց, թե ինչպէս պետք է, պայքարելով, պահպանել բանփոխական գործը լրտեսներից և դավաճաններից:

Հաջորդ ժողովում քննարկում էյինք այն պահանջները, վոր պիտի ներկայացնէյինք ձեռնարկատերերին: ՍՏԱՆԻՆԸ բանփոխներին բացատրում էր, թե ինչ պահանջել: Նա հիմնաւի կերպով գիտեր բանփոխների վիճակն ու կարիքները:

Բանփոխների ներկայացուցիչները գնացին գործարանատերերի մօտ: Նրանց պատասխանեցին — լավ, կտանք, իսկ հաջորդ օրը նրանց ձերբակալեցին:

Բանփոխները զայրացել էյին: Ընկեր Սոսոն ցույց կազմակերպեց: Մարտի 8-ին մենք շարժվեցինք դեպի բանտը, պահանջելով ազատել ձերբակալվածներին: Ամբոխի մեջ, տղամարդկանց հետ կողք-կողքի, ընթանում էյին կանայք:

Ընդհուպ մոտեցանք բանտին: Կալանավորները տեսնում են մեզ լուսամուտներից, աղաղակում, փողջուհում են մեզ: Թվում էր, թե վանդակներն ու պատերը ցնցվում են և կենդանի հեղեղը շուտով դուրս կթայթէր:

Բանտային վարչութիւնը, վախենալով, հաղորդեց բանփոխներին, վոր ձերբակալվածներին կփոխադրեն առաքման գորանոցները: Զինվորները շարժեցին շղթայաձև, դուրս բերին 32 բանփոխի և տարան, իսկ բանփոխների ամբոխը հետևում, պահանջում է ազատել նրանց: Բոլոր նրանք, ովքեր մօտան գորանոցները, ձերբակալվեցին — մի քանի հարյուր հոգի: Նրանց թվում նաև իմ յեղբայր Պորֆիրին: Ինձ ու առհասարակ կանանց զինվորները յետ էյին քշում:

Ընկեր Սոսոն այն գիշեր ուժեղ կերպով նախապատրաստում էր բանփոխների նոր հզոր ցույց: Առափոսից բանփոխները գործարաններից կազմակերպված շարքերով շարժվեցին դեպի առաքման գորանոցները: Ցույցը դեկավարում էր ընկեր Սոսոն:

Յետ գնացի ամուսնուս հետ միասին: Գնում էյինք յերգելով, յերգում էյինք ժողովրդական յերգեր:

Առաքման գորանոցը հենց վոր իմացավ, սկսեց շարժվել, մռնչալ:

Ցույցի ամենայեռուն ժամանակ յետ տեսա, թե ինչպէս մի բանփոխ հողի մի դունդ վերցրեց և նետեց կապիտան Անթաձեյի վրա:

Ձերբակալվածներն այդ ժամանակ կոտորեցին դարպասները և դուրս փախան: Զինվորները, աղղանշանի համաձայն, համազարկեր արձակեցին ցուցարարների վրա, մահախնդ կրակեցին սկզբում ողում, հետո՝ մարդկանց վրա: Շատերն ընկան: Ինչպէս հետո պարզվեց, 14-ը սպանվել էյին և շատերը վիրավորվել: Ժողովուրդն իրարանցման մեջ ընկած քաշվեց մի կողմ: Ընկեր Սոսոն նետվեց ժողովրդի մեջ, կոչ էր անում, վորպեսզի շփոթութիւն չլինի, բացատրում էր, թե ինչ անել հետո:

Շուտով հրապարակն ամայացավ: Զինվորները հրրացանները ցած դրին: Սոսոն քայլում է ընկերների հետ, դես ու դեն է նայում, արհամարհելով վտանգը:

Յետ այդ ժամանակ վազում, յեղբորս էյի վորոնում, կարծում էյի սպանված է: Մեկը կանչում է «ոգնեցեք», մյուսը՝ «շուր»...

Հարձակվում եմ թաղային հսկիչ Խոճկիրվելու վրա, լալիս եմ խելագարի պես: Նա ապուշ կտրեց, իրեն կորցրեց: «Յետ չեմ սպանել, — ասում է վախվիսելով, — Անթաձեյն էր»:

Սպանվածներին ու վիրավորվածներին հավաքեցին մեր

կանայք՝ Դեպիսե Շապատափան, Նատալիա Կիրտաձեն,
Գայանե Չխաիձեն և ուրիշները: Դրոգներով փոխադրեցին
հիվանդանոց:

Բանվորները պատրաստվում էին թաղմանը: ՄՏԱԼԻՆԸ
ներանց ասում էր, թե պայքարն առջևումն է: Աշխատանքի
վոչ վոք դուրս չեկավ: Ընկածներին հիվանդանոցից դուրս
բերելու մոմենտին թվում էր, թե վողջ բանվորական
Բաթումին յեկել է թաղման:

Կազակներն ու վողջ ժանդարմերիան վոտքի էյին
յելել, շրջապատել էյին սգերթը, պատժի սպանալիքի տակ
չեյին թույլ տալիս յերգել:

Գնում էյինք լուռ:

Մեզ հետ էր ընկեր Սոսոն:

Յեղբայրական գերեզմանի մոտ սերտորեն համախմբե-
վել են բանվորները: Ժանդարմները ճառեր արտասանել
թույլ չեյին տալիս: Բանվոր Լուկա Քորիձեն, ուժեղ, տա-
քաբյուն մարդ էր, յերևում է, ցանկանում էր ատելի ժան-
դարմին փոսը նետել:


Սոսոն, վորը մոտ էր կանգնած և աչալուրջ հետևում
էր այդ ամենին, նկատեց այդ և ընկերով միջոցով հայտ-
նեց. «Չհամարձակվես, տեսնում ես շղթան,—ժողովուրդը
կկորչի»:

Դազալները ծածկվեցին հողով, հրաժեշտ տվինք,
սկսեցինք ցրվել:

Կազակները—մեր հետևից, և հանկարծ, ըստ յերևույ-
թին վորպես ծաղրանք, թաղման քայլերդ յերգեցին:

Բանվորները սգում էյին լուռ և կրկնում էյին ՄՏԱԼԻՆԻ
խոսքերը, վոր կգա մեր ժամանակը, դեն կշարտենք ցա-
րական ինքնակալությունը և այն ժամանակ մարսեյեզով
կգանք գերեզմանի վրա—կպատմենք ձեզ՝ ընկածներիդ,
բավոր դասակարգի հաղթանակի մասին:

Մենք ոգնում էյինք մեր ամուսիններին ու յեղբայր-



Բաթումի բաղա՛ի Պուսկինյան

Վոդ. № 13 տունը, ուր 1901 բվականին
տպել է ընկեր ՄՏԱԼԻՆԸ

ներին: Ընկեր Սոսոն մեզ ամեն կերպ ներգրավում էր հեղափոխական աշխատանքի մեջ: Նրա նախաձեռնությամբ մենք սկսեցինք բանվորական ներկայացումներ կազմակերպել յերկաթուղային փոքրիկ բեմի վրա: Խաղում էինք «Սիբիրելի» («Սիբիրական»), «Քարթվելի ղեղա» («Վրացի մայրը»), պիեսները: Վոստիկանությունը դրա վրա նա-յում էր վերպես անփնտս գործի վրա, բայց դրանից գոյա-ցած գումարը հատկացվում էր ձերբակալված բանվորների ոգտին:

Բացի դրանից, ընկեր Սոսոն մեզ մասնակից էր անում հեղափոխական գործին:

Կանանցից ամենահրաշային, ամենազարգացածը Դես-պինե Շապատավան էր: Նա գիտեր վրացական, հայկական, թյուրքական, հունական լեզուները: Նա ոգնում էր ընկեր Սոսոյին հեղափոխական ընդհատակի ամենադժվար և վրտան-գավոր աշխատանքում:

Իզուր չէր, վոր Սոսոյի ձերբակալությունից հետո, ժանդարմների բարկությունը թափվեց Դեսպինեյի վրա:

Յերբ ընկեր Սոսոն ապրում էր մեզ մոտ, մենք թազ-ցընում էինք տպագրական կատակը և տառերը,— գիշերը թաղում էինք տան մոտ գտնվող յեգիպտացորենի ագա-րակում:

ՍՏԱԼԻՆՆ ու իր ընկերները սովորաբար ցերեկն էին տպագրում:

Ընկեր ՍՏԱԼԻՆԸ թանգ էր գնահատում ժամանակը, քիչ ուշադրություն էր նվիրում ուտելուն, մասնավոր խոսակցություններին, նստում էր սեղանի մոտ և թուղիկ-ներ էր գրում: Հետո նրա մոտ էին գալիս բանվորները՝ խորհուրդ ու ցուցումներ ստանալու, և նա յերկար զրու-ցում էր նրանց հետ: Շուտով նրա համար մեր տանը մնալը վտանգավոր դարձավ:

Մի անգամ իմ յեղբայրը լուսամուտից տեսնում է,

վոր զեպի տունն և գալիս պրիստով Չիլիվաձեն՝ ստրա-
նիկներն հետ: Սկզբում, առանց կշռադատելու, նա ցան-
կանում է լամպը մարել, բայց ընկեր Սոսոն հանգիստ
կանգնեցնում է նրան,—դա կասկած կհարուցի: Յեղբայրս
դուրս յեկավ պրիստովին հանդիպելու և պատասխանելով
հարցին, ցույց տվեց մի կողմնակի բնակարան: Մինչև
նրանք այնտեղ վորոնում էյին, ընկեր ՍՏԱՆԻՆԸ թագնվեց:

1902 թվի ապրիլին ՍՏԱՆԻՆԸ ձերբակալեցին: Յես
նրան նորից տեսա 1904 թվին: Նա փախել էր քսորա-
վայրից: Ընկեր Սոսոն մեզ մոտ հայտնվեց զինվորի հա-
գուտոով: Նրան այն ժամանակ սկսեցին կոչել «կորա»:

Իմ ամուսինն աշխատում էր յերկաթուղում, վորպես
կոնդուկտոր, յեղբայրս՝ Սիլվիստրոն սպանված էր: Սոսոն
խնդրեց կանչել Պորֆիրին:

Նա նրա հետ յերկար խոսեց ինչ վոր բանի մասին:

Ընկեր ՍՏԱՆԻՆԸ մեզ մոտ մի քանի ուր ապրեց:

Նրա ուրիշ բնակարան փոխադրվելուց հետո, գիշերը
աղմուկ էմ լսում բախում: Ամուսինս ծառայության տե-
ղումն էր: Զինվորները շրջապատեցին տունը: Դա կես գի-
շերին էր: Առավոտը, լուսաբացին բացում էմ դուռը—
աստիճանների վրա նստած է մի սպա: Յերեկը յեկան
ժանդարմները, զինվորները հեռացան: Ժանդարմներն ամեն
ինչ տակն ու վրա արեցին,—վոչինչ չգտան, վերցրին միայն
ամուսնուս աստիճանակը: Ինձ սպառնում էյին, հարցնում,
թե ուր է մեր «կեցվորը»: Նրա անունը չեյին տալիս:

Դրանից հետո ինձ կանչում է գահիճ իշխան Գուրիե-
լին, խոսք է քաշում:

Յես պատասխանում էմ, վոր իմ գործը բանջարա-
նոցում աշխատելն է, և յես վոչինչ չգիտեմ:

Այն հիշատակելի ուրերին ընկեր Սոսոն յերբեմն զրու-
ցում էր ինձ հետ, բացատրում էր, թե ինչպիսին կլինի
մեր կյանքը, յերբ մենք տապալենք ցարին ու կապիտա-

լիստներին: Այն, ինչ նա այն ժամանակ ասում էր, այժմ
յես տեսնում էմ կենսագործված:

Կապիտալիստները մեզ զրախտ էյին խոստանում յեր-
կրնքում, իսկ յերկրի վրա մեզ խեղդում էյին: Այժմ այդ
յերկնային զրախտը նրանց ենք տվել, իսկ մեր կյանքը
ինքներս կառուցեցինք լենինյան կուսակցության ղեկա-
վարությամբ, իմաստուն առաջնորդ, հարազատ ՍՏԱՆԻՆԸ
ղեկավարությամբ—յերջանիկ, բերկրալից կյանքը:

ՈՍՄԱՆ ԳՈՒՐԳԵՆԻՁԵ

ԲՈՒՀԵՎԻԶՄԻ ՄԵՆ ԱԳԻՏԱՏՈՐԸ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԸ

1893 թվականից յես աշխատում եյի Ռոտշիլդի գործարանում, Բաթումում:

Դժվար է նկարագրել, թե վորքան ծանր եր բանվորների զրույթունը: Որական աշխատում եյին 15—16 ժամ, առանց հանգստի, առանց հույսի մի նշույլի: Պետերին ամենաչնչին անհնազանդութիւնն ցույց տալու համար բանվորներին տուգանում եյին, հաճախ նաև ծեծում:

Առանձնապես ծանր եր աշարացի բանվորների զրույթիւնը: Տմարդի շահագործմանն ավելանում եր հալածանքը աղգային հողի վրա: Աշարացու համար դժվար եր նույնիսկ գործարան ընդունվելը, առանց նախապես կաշառք տալու:

Այս բոլորն առաջացնում եր բանվորների վրդովմունքը: Սակայն այդ վրդովմունքն ու դժգոհութիւնը կազմակերպված պայքարի չեյին վերածվում, վորովհետև մինչև

ընկեր ՍՏԱՆԻՆԻ գալը Բաթումի, գործարանի բանվորների շրջանում փաստորեն իսկական հեղափոխական վոչ մի աշխատանք չեր տարվում:

Միայն 1901 թվականին գործարանի բանվորներն զգացին ինչ վոր մեկի ամուր, կազմակերպող ձեռքը, վորը հմտորեն ղեկավարում եր բանվորներին, միավորում եր նրանց յելույթները:

Դա ընկեր ՍՏԱՆԻՆԻ ձեռքն եր, վորը Բաթումի գալու առաջին իսկ օրից հսկայական աշխատանք եր կատարում բանվոր զասակարգի հեղափոխական պայքարը կազմակերպելու ասպարիզում:

Ընկեր ՍՏԱՆԻՆԸ կարճ ժամանակում կազմակերպեց մի ամբողջ շարք սոցիալ-դեմոկրատական խմբակներ, վորոնց մեջ ներգրավեց Մանթաշևի և Սիդերիդիսի գործարանների առաջավոր բանվորներին: Այդ խմբակների մեջ եյին մտնում նաև մեր գործարանից մի շարք բանվորներ: Ընդ վորում ընկեր ՍՏԱՆԻՆԸ առանձնապես ընդգծում եր տարբեր ազգութիւնների բանվորներին խմբակներում ներգրավելու անհրաժեշտութիւնը, աշխատավորների ինտերնացիոնալ դաստիարակութեան խնդիրը:

Մի անգամ, 1901 թվականի վերջին, մեր գործարանի բանվոր Պորֆիրի Կուրիձէն ինձ ասաց, վոր իր բնակարանում Բարցխանում կկայանա բանվորների ժողով, վորտեղ հանդես կգա Թիֆլիսից յեկած հայտնի հեղափոխականը: Պորֆիրին ինձ ևս հրավիրեց գալ այդ ժողովին: Պետք է ասեմ, վոր մինչ այդ յես յերբեք հեղափոխական ճառեր չեյի լսել:

Նշանակված օրը յես յեկա Կուրիձէյի մոտ, Բարցխանա—Բաթումիի ծայրամասը: Յես կարծում եյի, թե բոլորից շուտ տեղ կհասնեմ: Վորքան զարմացա յես, յերբ տեսա, վոր ամբողջ սենյակն արդեն լցված է բանվորներով, վորոնք սեղմ կերպով խմբվելով յերիտասարդ մի մարդու շուրջը, ուշադրութեամբ լսում եյին նրա խոսքերը:

Դա ընկեր ՄՏԱԼԻՆՆ եր, վոր անց եր կացնում իր խմբակներից մեկի ժողովը:

Ընկեր ՄՏԱԼԻՆԻ առաջին իսկ խոսքերից, վոր յես լսեցի, հասկացա, թե ինչու այդքան ուշադրությամբ բանվորները լսում են նրան:

Նա խոսում եր բանվորների սրտերին մոտ բաների մասին, այն բանի պատճառների մասին, թե ինչու բանվորները, աշխատելով իրենց ուժերից վեր, ստանում են չնչին կոպեկներ, վորոնք հազիվ են բավականացնում, վորպեսզի սովից չմեռնեն:

Ընկեր ՄՏԱԼԻՆԸ հիանալիորեն կապված եր բանվորների մասսաների հետ և մանրամասնորեն զիտեր բանվորների կյանքը: Ուստի այն բոլորը, ինչ վոր նա բացատրում եր, սերտորեն կապում եր բանվորների կյանքից վերցրած կոնկրետ փաստերի հետ, և զրա համար ել նրա ճառն այնքան հասկանալի յեր մեզ:

Նա մեզ պատմում եր բանվորների հեղափոխական յեղույթների մասին ուրիշ քաղաքներում, ասում եր, վոր և մենք, Բաթումի բանվորներս, պետք ե կազմակերպվենք և պայքարի դուրս գանք ինքնակալության դեմ, կապիտալիստների դեմ:

Ժողովի վերջում ընկեր ՄՏԱԼԻՆՆ ասաց, թե մեզանից յուրաքանչյուրը, վոր ներկա յե ժողովին, պետք ե ինքը սովորի աշխատանքը կազմակերպել բանվորների շրջանում: Յեվ վորպես առաջին ստուգումը հեղափոխական գործի համար աշխատելու մեր ունակության, նա առաջարկեց կազմակերպել զրամի գաղտնի հանգանակություն՝ բանվորների ոգնության ֆոնդի համար գործադուլի դեպքում: Յես, ինչպես և շատ ուրիշները, կատարեցի այս հանձնարարությունը: Փողերը մեզ շատ խիստ պետք յեկան հետո, յերբ ընկեր ՄՏԱԼԻՆԻ ղեկավարությամբ գործադանում կազմակերպվեց խոշոր գործադուլ: Հավաքած փողերը մենք անվանեցինք մարտական ֆոնդ:

Բայց ընկեր ՄՏԱԼԻՆԸ հսկայական աշխատանք եր կատարում վոչ միայն Բաթումի բանվորների շրջանում: Ինչպես յես իմացա հետո մեր բանվորներից մեկից, Սերատա Բախուրիձեյից, ընկեր ՄՏԱԼԻՆՆ անց եր կացրել անտառում Ուրա-Բաթում գյուղի աջար գյուղացիների ընդհասակյա ժողով, գյուղացիների ժողովներ անց եր կացրել նայեմ մյուս գյուղերում: Յեվ ամենուրեք նրա խոսքերը բորբոքում եյին մասսաներին դեպի պայքար, կոչում եյին դեպի հեղափոխական յեղույթները:

Շատ տարիներ են անցել այն ժամանակից, յերբ յես լսեցի ընկեր ՄՏԱԼԻՆԻ վոզեշունչ ճառը: Բայց իմ հիշողությունից յերբեք չի ջնջվի վեհ դեմքն այն մարդու, վորը մույլ ընդհատակում դեռ ՅԾ տարի առաջ աշխատավորներին պայքարի կոչեց հանուն այն գործի, վորը նրա առաջնորդությամբ այժմ Խորհրդային Յերկրի ժողովուրդներն ընդմիշտ նվաճել են հաստատապես և անխորտակելիորեն:

«ԱՐԵՎԸ ԿՓԱՅԼԻ
ՄԵՋ ՀԱՄԱՐ»

Շատ ծանր էլին Բաթումի բանվորների աշխատանքի պայմանները հավթաարդյունաբերական ձեռնարկության ժամ, հարկադրված պարապուրդները չեյին վճարվում, աշխատավարձը անբաժանելի էր, գոյություն ունեւր տուգանքների դաժան սխտեմ:

1901 թվի աշնանը մեր առաջավոր, հեղափոխականորեն տրամադրված բանվորներից մեկը՝ Կոժիա Կանդելակին ինձ ասաց, վոր Թիֆլիսից յեկել է մի կուսակցական աշխատող, պրոպագանդիստ, վորը ցանկանում է մեզ հետ խոսել:

— Ձեր տղաներից ընտրիր ամենահուսալիններին, — ասաց ինձ Կանդելակին, — և քո տանը ժողով սարքի:

Յես խոսեցի ընկերների հետ և նշանակված ժամանակին իմ փոքրիկ տնակում, վորը գտնվում էր քաղաքի խուլ և հեռավոր մասում, հավաքվեցին մոտ 30 բանվորներ:

Անհամբերությամբ սպասում էյինք Թիֆլիսի կուսակցական ընկերոջ գալուհն: Լավեց պայմանավորված թակոցը, յես բացեցի դուռը և սենյակ մտավ Կոժիա Կանդելակին, իսկ նրա հետեից մեր հյուրը:

Դա քսաներկու տարեկան յերիտասարդ մարդ էր՝ սեւամազ, նիհար, յեռանդուն, խիստ գծազրված դեմքով:

Դա ընկեր ՍՏԱՆԻՆՆ էր, Սոսո Ջուղաշվիլին:

Մենք ծանոթացանք, և մի քանի ընդհանուր ֆրազներից հետո սկսվեց մի աշխույժ զրույց: Նրա խոսքերն ինձ հիացրին: Վերջապես մենք իմացանք, թե ինչն է շահագործման գաղտնիքը և, վորն ամենագլխավորն է, իմացանք, վոր պրոլետարիատի ազատագրումը իրենց՝ բանվորների ձեռքի գործն է: Ինչքան պարզ, հասարակ և համոզեցուցիչ էր խոսում ընկեր Սոսոն, նրա խոսքերի մեջ ամեն ինչ ինքն իրեն բացահայտվում էր — բանվոր դասակարգի դրուժյունը, նրա շահագործումն ու ճնշումը բուրժուազիայի կողմից, ցարի ու կապիտալիստների դաշինքն ընդդեմ բանվորների, պրոլետարիատի պայքարը ինքնակալության դեմ, իրավակարգի տապալումը, վորպես ազատագրման միակ ճանապարհ:

Ժամերն անցնում էյին աննկատելիորեն: Իրիկունը վրա հասավ, նրան հաջորդեց գիշերը, իսկ մենք դեռ նստած էյինք ծխով լի սենյակում, շունչներս մեզ պահած, և լսում էյինք մեր հյուրին: Բայց և այնպես հարկավոր էր ցրվել: Հրաժեշտի ժամանակ Սոսոն մեզ ասաց.

— Հարկավոր է ստեղծել քաղաքական խմբակներ: Կազմակերպեցեք մի քանի փոքրիկ խմբակ և յես կղեկավարեմ պարապմունքները:

Մենք ուրախությամբ ընդունեցինք այդ առաջարկությունը: Կարճ ժամանակում ստեղծվեց 11 խմբակ: Յերեք չեն մոռացվի Սոսո Ջուղաշվիլու, մեր բոցավառ և իմաստուն ուսուցչի հետ ունեցած մոտիկ հանդիպումների այդ որերն ու շաբաթները:

Պարապմունքները տեղի էյին ունենում կոնսպիրատիվ կերպով: Ինքը՝ ընկեր ՍՏԱՆԻՆՆ ահագին նշանակություն էր տալիս կոնսպիրացիային: Յեթե նա գալիս էր վերարկույով, ապա հեռանում էր անպայման հագուստը փոխած: Նա յերբեմն հասցնում էր որական յերկու պարապմունք անցկացնել: Ճշտապահ էր, յերբեք չէր ուշանում, թանգ էր գնահատում թե իր և թե մեր ժամանակը:

Մենք սիրեցինք Սոսոյին և խիստ ամուր կապվեցինք նրա հետ: Մարդկանց հետ վարվելու անման ձևը—հրապուրիչ պարզութիւնը, ուշադիր լինելը, լսելու և մարդուն առաջին հենց խոսքերից հասկանալու հմտութիւնը—դեպի նա զրավեցին մեր սրտերը, իսկ նրա խելքը, — արիութիւնը և համարձակութիւնը վողեջնչում էյին մեզ վճռակամութեամբ՝ գնալու նրա հետ միասին դեպի պայքար և պայքարել մինչև հաղթանակը:

Անցավ մի ամիս: Նոր տարվա նախորդակին ընկեր ՍՏԱԼԻՆԸ հավաքեց խմբակների բոլոր ավագներին և առաջարկեց նոր տարվա ընկերական հանդիպում կազմակերպել: Առաջարկութիւնն ընդունվեց ուրախութեամբ:

Լույս նոր տարվա գիշերը մենք հավաքվեցինք Սիլիբիտարո Լոմշարիայի բնակարանում:

ՍՏԱԼԻՆԻ կատակները ծիծաղի պոռթկումներ էյին առաջ բերում: Բոլորն իրենց հիանալի էյին զգում: Մեր զրույցն աննկատելիորեն անցավ քաղաքական թեմաներին և այստեղ, վրա հասած լուսթյան մեջ, նորից հուզված հնչում էր ստալինյան ձայնը:

Այդպես նստեցինք մենք մինչև լուսաբաց: Յերբ լուսամուտներից ներս թափանցեց արշալույսի վարդազույն լույսը, ՍՏԱԼԻՆԸ բաժակը բարձրացրեց և ասաց.

— Ահա և լուսաբացը: Շուտով կծագի արևը: Այդ արևը կփայլի մեզ համար:

Այդ գիշեր ձևակերպվեց Բաթումիի սոցիալ-դեմոկրատական կազմակերպութիւնը: Հենց այստեղ ել ընտրվեց կուսակցական ղեկավար խմբակ՝ ՍՏԱԼԻՆԻ գլխավորութեամբ:

Այդպես մենք հանդիպեցինք ՍՏԱԼԻՆԻ հետ անմոռանալի 1902 թվականին:

Այդ տարվա դեպքերը շատ արագորեն ծավալվեցին: Նրանք սկսվեցին Ռոտշիլդի գործարանի պահեստում պատահաբար ծագած հրդեհից: Ադմինիստրացիան մոբիլիզացիայի յենթարկեց բանվորներին հրդեհը հանգցնելու համար:

Министерство
Юстиции.

ГЛАВНОЕ
ТЮРЕМНОЕ УПРАВЛЕНИЕ.

Дипроизводство IV
Административно-хозяйственное.

17 Августа 1903 года.

(Signature)

(Signature)
25/10

Секретно.

Господину Военному Губернатору Батумской
области.

На основании ВЫСОЧАЙШАГО повелѣнія, послѣдовавшаго 9 Іюля 1903 года по всеподданнейшему докладу Министра Юстиціи крестьянина Іосифа Виссарионовъ ДЖУГАШВИЛИ за государственное преступленіе, подлежитъ высылкѣ въ Восточную Сибирь подъ гласный надзоръ полиціи срокомъ на три года.

Вслѣдствіе сего, Главное Тюремное Управленіе имѣетъ честь покорнѣйше просить Ваше Превосходительство сдѣлать распоряженіе о высылкѣ помянутого Дзугашвили, содержащагося въ Батумскомъ тюремномъ замкѣ, въ вѣдѣніе Иркутскаго Военнаго Генерала-Губернатора, черезъ Новороссійскъ, Ростовъ, Царицынъ и Самару съ очередной престантской партіей.

Прилагается при семъ извѣщеніе Департамента Полиціи за № 9520 подлежитъ возвращенію, по представленіи названному лицу, непосредственно въ означенный Департаментъ.

За Начальника Главнаго

Тюремнаго Управленія

(Signature)

Աղադատագրության մինիստրության բանասլին գլխավոր վարչության
գլխումը Բարումի մարզային զինվորական նահանգապետին՝
խնդրելով ախտել Ի. Վ. ՍՏԱԼԻՆԻՆ Արևմտյան Սիբիր:

Յերկու որ մենք պայքարում եյինք մոլեգնած տարերքի դեմ, մինչև վոր հանգցրինք կրակը: Մենք կարծում եյինք, թե այդ որերի համար մեզ կվճարեն, բայց այդպես չեղավ: Ադմինիստրացիան չգերազանցված լիտիությամբ մեզ հայտարարեց, թե «հրդեհ հանգցնելը աշխատանք չէ»: Ինչպես անել: Այստեղ մեզ ոգնության յեկավ ՍՏԱԼԻՆԸ: «Գնացե՛ք զրաւենյակ և պահանջեցե՛ք», — ասաց նա:

Շաբաշից հետո մենք հավաքվեցինք զրաւենյակի մոտ և ղերեկտորին դուրս կանչեցինք: Ամբոխն այնքան ազդեցիկ էր, վոր ղերեկտորը վախեցած դուրս ուղարկեց զործակատարին և հրամայեց ասել, վոր հրդեհը հանգցնելու համար բանվորները կստանան 2-ական ուղբի: Բավարարված այդ պատասխանից, մենք ցրվեցինք:

Այդ «յերկու ուղբիանոց հաղթանակը», ինչպես մենք նրան այն ժամանակ անվանեցինք, մեր առաջին հաղթանակն էր կապիտալիստների նկատմամբ: Այժմ ծիծաղելի յե այդ մասին հիշել, բայց այն ժամանակ դա իրոք հաղթանակ էր: Բանվորներն ավելի ակտիվ դարձան, զգացին իրենց ուժը: Բայց ադմինիստրացիան ել ինչ վոր բան հասկացել էր: Նա տեսավ, վոր բանվորների մեջ հայտնվել է ինչ-վոր ուժեղ և հեղինակավոր մարդ, վորը կարող է շատ անախորժություններ պատճառել:

Շարժվեց վոստիկանությունը:

Սկսվեցին ձերբակալությունները: Շուտով հրաման փակցվեց շատ բանվորների արձակման մասին: Արձակվողների մասին կախ տված ցուցակներում — բոլորը առաջավոր, ամենալավ բանվորներն են: Մենք խիստ զայրացանք և վորոշեցինք կամայականություն թույլ չտալ: Այդ մոմենտին մեր ՍՏԱԼԻՆԸ Բաթումում չէր, նա մի քանի օրով մեկնել էր Թիֆլիս տպագրական դադգյան և տառեր ձեռք բերելու: Նրա բացակայությունը մեզ շփոթեցնում էր, առանց նրան դժվար էր լուրջ քայլի դիմել: Սակայն ստալինյան դպրոցը մեզ ասում էր «պետք է գործել, պետք է համարձակ լինել»:

Մենք վորոշում ընդունեցինք ուղտիմատում ներկայացնել զիրեկցիային—կամ բոլոր արձակվածները յետ են ընդունվում, կամ գործադուլ:

Դիրեկցիան պատասխանեց մերժումով, և գործադուլում գործադուլ բռնկվեց:

Հենց այդ ժամանակ Թիֆլիսից վրա հասավ ՍՏԱԼԻՆԸ: Նա իջավ Լոմժարիայի մոտ: Յետ շտապեցի նրա մոտ. մշտնում եմ սենյակը և չեմ ձանաչում—նա առանց բեխերի և մորուքի յե: Առկայածում ե մի միտք՝ «կոնսպիրացիա»:

Յետ ցույց տվի ՍՏԱԼԻՆԸ մեր պահանջների տեքստը: Նա հավանութուն տվեց և ավելացրեց մի կետ՝ հարկադիր պարապուրդը վճարելու մասին: Յետ կասկածի տակ առա այդ պահանջի դեպ լինելը, բայց ՍՏԱԼԻՆԸ ծիծաղեց. «Մի անհանգստանա, նրանք վախեցած են և կվճարեն»:

Մյուս որը մենք գնացինք գործարան ներկայացնելու մեր պահանջները: Գլխավորից յեկավ գեներալ-նահանգապետ Սմագինը, վորին հեռագրով կանչել եր Ռոաշիլդը: Նա դուրս յեկավ բանվորների մոտ, կարգաց մեր պահանջները, կատաղեց և գոռաց. «ցրվել»:

Մենք ցրվեցինք, բայց աշխատանքի չեյինք ձեռնարկում:

Այն գիշեր ձերբակալեցին մեր գործարանի 32 բանվորի: Իմանալով այդ մասին, ՍՏԱԼԻՆԸ առաջարկեց ձերբակալությանը պատասխանել քաղաքական ցույցով:

1902 թվի մարտի 8-ին Բաթումիի փողոցներում տեղի ունեցավ բանվորների առաջին քաղաքական ցույցը, վոր կազմակերպել եր ընկեր ՍՏԱԼԻՆԸ:

Մենք ուղղվեցինք դեպի բանտ, ուր նստած եյին մեր ընկերները, ձերբակալվածներին ազատելու պահանջով:

Հաջորդ որը տեղի ունեցավ մի նոր, ել ավելի ազդու ցույց, վոր կազմակերպել եր ընկեր ՍՏԱԼԻՆԸ:

Հեղափոխական յերգեր յերգելով, մենք շարժվեցինք դեպի առաքման գորանոցները:

Նորից յերևացին գործերը, բայց այս անգամ դուրս թյունն ավելի լուրջ եր:

Մենք վորոշեցինք չնահանջել և ինչ գնով ել լինի ձգտել ընկերների ազատագրման: Տեսնելով ցույցը, կալանավորներն աղմուկ բարձրացրին և սկսեցին դռները կոտրատել:

Այն վայրկյան մթնոլորտը սրվում եր: Ամբոխը սպառնալից կերպով շարժվում եր դեպի բանտի դարպասները:

Յեվ այն ժամանակ կրակոցներ լսվեցին: Զորքը կրակում եր ժողովրդի վրա:

Այն որը թափվեց բանվորական արյունը, բայց մենք հաղթանակ տարանք: Այդ մի որն արեց այն, ինչ չեյին կարող անել տարիները: Բանվորների աչքերը բացվեցին: Նրանք տեսան իրենց թշնամուն իր գազանային փողջ կերպարանքով: Մասսաների քաղաքական գլխավորութունը վիթխարի բայլ եր արել դեպ առաջ:

Մարտի 9-ի գոհերի թաղումը հոյակապ ցույցի վերածվեց, վորի ժամանակ տարածվում եր ընկեր ՍՏԱԼԻՆԻ հռչակավոր թուղթիկը, վորը հեղափոխականացնող հսկայական դեր խաղաց:

Դրանից անմիջապես հետո ՍՏԱԼԻՆԸ ձերբակալվեց: Մենք մնացինք առանց սիրելի առաջնորդի, բայց, լավ հիշելով նրա խոսքերն ու ցուցումները, շարունակում եյինք պայքարը, վորգեղոված պրոլետարական հեղափոխության գործին անսահման նվիրվածության նրա որինակով:

ԿՈՏԵ ԿԱԼԱՆԴԱՐՈՎ

ՊԱՅՔԱՐԻ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԴՊՐՈՅԸ

1897—1898 թ. թ. յես աշխատում եյի Թիֆլիսում, Կարապետովի կամըջաշինական գործարանում, ինստրումենտալ ցեխում՝ վորպես փականագործ:

Մի անգամ նշումներ կատարողը, դժբախտաբար յես չեմ հիշում նրա ազգանունը, հարցրեց, թե չեմ ցանկանում արդյոք, զբաղվել ինքնակրթությամբ: Այդ տարիներին Թիֆլիսում կային առանձին խմբակներ, կիրակնորյա դպրոցներ բանվորների համար, ուր բանվորներին ծանոթացնում եյին աստղաբաշխությանը, աշխարհագրությանը, գրականությանը և այլն:

Յես հաճույքով համաձայնվեցի, և նա ինձ տարավ իր բնակարանը, վորը գտնվում էր Ավճալյան (այժմ Խորհրդային) փողոցում: Այստեղ կային 6 ընկերներ զանազան գործարաններից:

Այդ խմբակը ղեկավարում էր ընկեր Սոսոն:

ՍՏԱԼԻՆԸ մեզ ծանոթացնում էր կապիտալիստական իրավակարգի մեխանիկայի հետ, պատմում էր բանվորական շարժման մասին, այն մասին, վոր բանվորների տրեստեսական դրության բարելավումն անհնարին է առանց քաղաքական պայքարի ընդդեմ ցարական ինքնակալության:

Ընկեր ՍՏԱԼԻՆԻ այդ զրույցները մեր խմբակում ավելի ու ավելի հրապուրիչ եյին դառնում: Նա գիտեր խոսել այնքան պարզ, հարցի մեծ իմացությամբ. զրան կից, ընկեր Սոսոն շատ սրամիտ զրուցակից էր: Նյի մի բան — այստեղ, այս պարապմունքներին, մենք նրանից բացատրություններ եյինք ստանում մեր ամենորյա աշխատանքում, ընկերների հետ ունեցած մեր զրույցներում ծագած բոլոր հարցերի շուրջը:

Մեր խմբակի պարապմունքները մի տարուց ավելի տեցին և այդ ժամանակի ընթացքում մենք շատ բան սովորեցինք, և այն բոլորը, ինչ մենք իմացանք, բոլորովին նոր էր մեզ համար և այնքան նման չեր նրան, ինչ սովորաբար պատմում եյին մեզ կիրակնորյա դպրոցներում:

Հիշում եմ յերկաթուղային բանվորների 1900 թվի գործադուլը Թիֆլիսում: Այդ գործադուլի ժամանակ, մյուս ընկերների թվում, ձերբակալվեցի և յես: Յերեք ամիս անց, բանտից դուրս գալով, ընկած աշխատանքի վորոնումների հետևից, յես մեկնեցի Ղարս, բայց չկարողանալով տեղավորվել այստեղ, փոխադրվեցի Բաթումի:

Այստեղ տեղավորվեցի Մանթաշի գործարանում վորպես փականագործ: Բնակություն հաստատեցի Կոծլա Կանդելակիի բնակարանում, վոր նույնպես աշխատում էր այդ գործարանում:

Դրանք ծանր տարիներ եյին — հյուծիչ աշխատանքը գործարանում, չնչին աշխատավարձը, տուգանքները, խեղանդամությունները, վոր բանվորները ստանում եյին տեխնիկական հսկողության բացակայության հետևանքով, և անվերջ լրտեսները, վորոնք տեղեկացնում եյին ազմի-

նիստը ցլային այն ամենի մասին, ինչ վոր լսում եյին բանվորական շրջանում:

Մինչև ընկեր ՍՏԱԼԻՆԻ գալը, Բաթումում բանվորների մասսայական շարժում չկար:


ՍՏԱԼԻՆԸ Բաթումի յեկավ 1901 թվի նոյեմբերին: Նա տեղավորվեց մեր բնակարանում:

Հենց առաջին օրերին ընկեր Սոսոն կապ է հաստատում Ռոտշիլդի, Մանթաշևի, Միդերբիդիսի գործարանների առաջավոր բանվորների հետ և, այդպիսով, նրա ղեկավարությամբ կազմակերպվում է առաջին բանվորական խումբակը, վորի կազմի մեջ մտնում եյին տասնեկինգ հոգի:

Յես հիշում եմ, թե ինչպես կայարանից վոչ հեռու տեղի ունեցավ ընկեր ՍՏԱԼԻՆԻ հանդիպումն ու զրույցը խմբակի անդամների հետ:

Ինչ ազանությամբ եյին վորսում բանվորները ստալինյան յուրաքանչյուր խոսքը: Յեվ դա հասկանալի յե, վորովհետև վոչ այլ վոք, քան միայն նա գիտեր բանվորին ընդհուպ մոտեցնել բանվորական շարժման կարևորագույն խնդիրներին: Դրան կից, պետք է նկատի ունենալ, վոր ընկեր Սոսոն միշտ խոսում եր հրապուրիչ կերպով, պարզ, միշտ ղեմելով որինակների և փաստերի: Սեղմ ողակի պես շրջապատելով ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ, մենք սովորաբար հուզմունքով եյինք լսում նրա պարզ, հասարակ ճառերը: Նա խոսում եր բանվորական կյանքի առօրյա մանր հարցերի մասին, կապիտալիստների շահույթների մասին, այն մասին, թե ինչպես են նրանք ստանում այդ շահույթներն ի հաշիվ բանվորների շահագործման, ինքնակալության մասին, հոգևորականության մասին: Մենք ցրվում եյինք բարձր տրամադրությամբ, ուշ գիշերին:

Այդ զրույցները խորին սեր առաջ բերին բանվորների կողմից դեպի ՍՏԱԼԻՆԸ: Աշխատանքն առանձին խմբակներում, ՍՏԱԼԻՆԻ սխտեմատիկ զրույցներն առաջավոր բան-



«ՍՏԱԼԻՆԸ առակերտական տրիմերին»
Քանգակ՝ Ս. Կակաբաձեյի

վորներին հետ արդեն 1901 թվականին մեզ հնարավորութ-
յուն տվին հրավիրելու առաջին մասսայական ժողովը:

Այդ ժողովը տեղի ունեցավ գիշերը, Ծովյանովի գոր-
ծարանի մոտ ընկած հրապարակում: Հավաքվել էին 200 —
300 բանվորներ Ռոտշիլդի, Մանթաշևի և ուրիշների գոր-
ծարաններից: Հրապարակից փոքր ինչ հեռու, բլրակի վրա
դանվում էին մարտկոցային լուսարձակները:

Բանվորները պատրաստվեցին զրույցի: Յեւ ահա վեր
կացավ ՄՏԱԼԻՆԸ: Հնչեցին նրա հրապուրիչ, համոզված
ձառի առաջին խոսքերը: Նա բանվորներին կոչում էր դեպի
անխնայ պայքար ինքնակալության և կապիտալիստների դեմ:
Այդ ժամանակ լուսարձակի ճառագայթների խուրճը, ակո-
սելով յերկինքը, հանկարծ ընկնում է այն հրապարակի
վրա, ուր տեղավորվել են բանվորները, և լուսավորում
ՄՏԱԼԻՆԻՆ: Պետք է խոստովանել, վոր մենք անհանգրս-
տացանք — մեզ կարող էին նկատել և շրջապատել: Բայց
ՄՏԱԼԻՆԸ հանգիստ կերպով ավարտեց իր խոսքը և մենք
ցրվեցինք, հետներս տանելով հուզիչ մտքեր և պայքարի
վճռակամություն:

Այդ նույն թվականին Չառբայում, խուլերային բարակ-
ների այն կողմը, թփուտներով շրջապատված բացատում,
գիշերը տեղի ունեցավ բանվորների նոր մասսայական ժո-
ղով: Հավաքվել էին 200 հոգի: Մենք մոտենում էինք
2 — 3 հոգով, գնում էինք զանազան ճանապարհներով: Դեպի
ժողովատեղին տանող ճանապարհին պահակներ էին դրված:
Ժողովը տեղ մեկ ժամից ավելի: ՄՏԱԼԻՆԸ հանդես յեկավ
30 րոպե տևող ճառով:

ՄՏԱԼԻՆԻ դեկավարությամբ կազմակերպված այդ ժո-
ղովները ցույց տվին մեզ, թե ինչ փայլուն կոնսպիրատոր
է ընկեր Սոսոն: Մի փոքրիկ մանրամասնություն. նա ժո-
ղովներին ներկայանում էր յերբեմն աջարական ձևով կա-
պած բաշուղով, յերբեմն շլապայով և մեծ մասամբ կաշ-
նեյով:

Մեր բնակարանում, վորը գտնվում էր Պուշկինսկայա փողոցի № 13 տանը, ՄՏԱԼԻՆՆ ապրեց մոտ յերկու ամիս, այնուհետև տեղափոխվեց յեղբայրներ Իլյարին և Դարիս-պան Դարախովիձենների մոտ: Նրա հետ տեղափոխվեց նաև Կոժիա Կանդելակին: Խնդիրն այն է, վոր այն տան կող-քին, ուր մենք եյինք ապրում, բնակություն հաստատեց թաղային վերահսկիչ Ինժկիրովին: Այդ «հարևանությունը» մեզ բնավ չէր ժպտում, և մենք, խորհրդակցելով ՄՏԱԼԻՆԻ հետ, վորոշեցինք փոխել բնակարանը: Յես փոխադրվեցի Բարցխանա:

Յես ցանկանում եմ պատմել մի հետաքրքիր եպիզոդ: Բանվորներ Կոտրիկաձեն և Կուրիձեն, տեսնելով, վոր ընկեր Սոսոյի կոշիկները մաշվել են, վորոշեցին նրա հա-մար նոր կոշիկներ գնել: Սոսոն վճռականապես մերժեց նրանց առաջարկությունը:

— Ձեր նվերը,—ասաց նա,— կընդունեմ այն ժամա-նակ, յերբ դուք խնճերդ լավ կոշիկներ կունենաք:

* *

Դեռևս ՄՏԱԼԻՆԻ Բաթում գալուց առաջ մենք կարո-ղացել եյինք կուտակել տառերի փոքրիկ պաշար, վոր դրաշարներ Ս. Թողրիան և ուրիշները բերում եյին զըր-պանների մեջ լցած: Այդ տառերը պետք յեկան մեր ընդհա-տակյա տպարանի համար, վոր կազմակերպել էր ՄՏԱԼԻՆԸ: Այդ տպարանի համար մասեր յես ու Դաթիա Լոմթաթի-ձեն եյինք պատրաստում: Այդ մասերը մենք դուրս եյինք կրում զրոգներով, վորոնցով սովորաբար փայտի թեփն եյին դուրս տանում գործարանից:

Այն ժամանակաշրջանի մեր կյանքում չի յեղել և վոչ մի դեպք՝ փոքր թե մեծ՝ վորին ՄՏԱԼԻՆՆ անմիջականորեն չմասնակցեր: Որինակ, հրդեհը Ռոտշիլդի գործարանի ան-տառանյութի բաժնում 1902 թվականին:

Ահազանգի շշակներ: Բանվորները դուրս թափվեցին գործարանից: Բոցը ծավալվում է: Աղմինխտրացիան առա-

ջարկում է բանվորներին մասնակցություն ցույց տալ հրդեհը հանգցնելու գործին, դրա համար խոստանալով հատուկ վարձատրություն: Սակայն հետո, յերբ հրդեհը մարվեց, բանվորներին մերժեցին տալ խոստացած պար-գեր: Դա հուզմունք առաջ բերեց բանվորների մեջ: ՄՏԱԼԻՆԻ առաջարկությամբ, մենք պնդեցինք մեր պահանջների վրա և հասանք այդ պահանջների գոհացմանը:

Ընկեր ՄՏԱԼԻՆՆ այն տարիներին, հեղափոխական շարժման արշալույսին, կանչում էր մեզ դեպի յերջանիկ, բերկրալից կյանք:

Այդ յերջանիկ, բերկրալից կյանքը մեզ համար յեկել է:

III. ՍՏԱԼԻՆՅԱՆ ՏՈՂԵՐԻ
ՄԵԾ ՈՒԺԸ

Ընդհատակի ծանր պայմաններում, հեղափոխական շարժման արշալույսին ստալինյան տպագրական խոսքի կայծերը մասսաներին վռտքի հանեցին գրոհելու կապիտալիզմի վրա, պայծառ, սեղմ և դրա հետ մեկտեղ պարզ ու մատչելի ստալինյան տողերը աճեցրին այրող ատելություն դեպի թշնամին, մեծ հավատ բանվոր դասակարգի գործի հաղթանակի նկատմամբ:

Այս տողերը հանդիսանում են իլյուստրացիա մեր կուսակցության պատմության սքանչելի եջերի համար, պատմության, վորն ընկեր Լավրենտի Բերիան ծավալել է իր «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» գեղեցիկ մեջ, վորը արժեքավորագույն մի գանձ է բոլշևիզմի տարեգրության մեջ:

Այդ պատմվածքները տալիս են կուսակցության ժամույլի գործին սիրով, հոգատարությամբ վերաբերելու անմոռաց պատկերներ. ընկեր ՄՏԱԼԻՆԸ բանտում նստած հոգ է տանում տառերի մասին, ամենայն ուշադրությամբ նախապատրաստում և խմբագրում է թերթի հերթական համարի նյութերը, նա հոգում է այն մասին, վորպեսզի թուղթիկների յուրաքանչյուր ոտտիսկը հստակ և մաքուր լինի, նա թափանցում է տպարանական գործի տեխնիկայի մեջ, թերթի շուրջը համախմբում բանվոր ընթերցողների կադրեր, մշտապես, որեցոր նրանց հետ ամրացնում կապերը...

Այս որինակներով այսօր պետք է դաստիարակել թերթերի աշխատող կադրերին, ԼԵՆԻՆԻ և ՄՏԱԼԻՆԻ աշխատանքի նմուշներով սովորեցնել բանվորական և գյուղական թղթակիցներին բոլշևիզմի խոսքը մասսաների մեջ տանելու հմտություն, համախմբել այդ մասսաներին կուսակցության դրած խնդիրներն իրագործելու համար մղվող պայքարում:

Մոռացության տալ ԼԵՆԻՆԻ և ՄՏԱԼԻՆԻ ցուցումները մեր ժամույլի կուսակցականության մասին, նրա ունեցած կապի մասին

մասսաների հետ, գործնականում հասցնում ե մասսաներից կտրվելուն, դատակարգային զգաստության բթացմանը, կոնկրետ իրականութիւնն ու մասսաների պահանջները չիմանալուն:

Յուրաքանչյուր թերթի բաղմակողմանի աշխատանքի բոլոր ճյուղերը պետք է ներծծված լինեն հեղափոխական բարձր զգաստությամբ, կենդանի կազմակերպչական աշխատանքով, վճռական պայքարով քաղաքական անհոգության բոլոր արտահայտութիւնների դեմ, ծավալուն ինքնաքննադատությամբ:

Յուրաքանչյուր հոգված, յուրաքանչյուր թղթակցութիւն, յուրաքանչյուր տող թերթում պետք է շնչի անհաշտ պայքարով **ԼԵՆԻՆԻ—ՍՏԱԼԻՆԻ** կուսակցության գործի համար:

«ԶԱՐՅԱ ՎՈՍՏՈԿԱ» քերթի 1936 քվակամի ապրիլի 18-ի առաջնորդողից՝ «Բոլշևիկներն մամուլի որվան նախապատասխանելու համար»:

Գ. ԼԵԼԱՇՎԻԼԻ

**ԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ
ԸՆԴՀԱՏԱԿՈՒՄ
ԴԱԶԳՅԱՀԻ ՄՈՏ**

Մտնելով բանվորական խմբակ, յես արդեն այն ժամանակ գիտեյի, վոր բանվորների պայքարը ղեկավարում եր ընկեր **ՍՏԱԼԻՆԸ**, վոր **Լադո** կեցխովելու հետ միասին ընկեր **ՍՏԱԼԻՆ** առաջ ե քաշում կուսակցական անլեգալ մամուլ ստեղծելու առաջնակարգ խնդիրը:

Հետագայում ինձ այլեւ չվիճակվեց հաճախել բանվորական խմբակը. Միխո Բոճորիձեն հազորդեց այն առաջադրության մասին, վոր տվել եր նրան ընկեր **ՍՏԱԼԻՆԸ**, այն ե՝ գտնել համապատասխան սենյակ---կազմակերպել տպարան: Դա 1900 թվականի սկիզբն եր: Ինձ ծանոթացրին ընկերներին հետ: Մենք ձեռք բերինք տառեր և այն ամեն անհրաժեշտը, ինչ պետք եր տպագրության համար: Սենյակ գտանք Լոտկինսկայա փողոցի վրա գրտնրվող տանը:

Պետք եր մտնել բակը, պատշգամբով անցնել դեպի խոհանոցը, իսկ այնտեղից հատուկ իջանցքի միջոցով ընկնել նկուղային շենքը, ուր դրված եր դռնգլահը:

Նկուղում նեղվածք եր---տարածութիւնը՝ յերեք արշին եր, բաղմապատկած չորսով:

Լույսը վերեկից ընկնում ե ցանցապատ պատուհանից ներս, սակայն մենք աշխատում ենք լամպի լույսի տակ:

Վրացական և ռուսական լեզուներով տառերը դասավորված էյին կարգով:

Դազգյահը մի քառակուսի տախտակ էր, վորի վրա փոխադրում էյինք պատրաստի շարվածքը, իսկ հետո վերևից դնում էյինք մի թերթ թրջած թուղթ և խոզանակով ծեծում մինչև կկպչեր տառերին: Այդպես էյին ստացվում ոտտիսկները: Որ ու գիշերվա ընթացքում հաջողվում էր տպագրել 600—700 թուղթիկ:

Յես տպագրության համար նյութեր բերում էյի Միխո Բոճորիձեյից, Անդրեյեվսկայա փողոցից և այնտեղ էլ յերբեմն հանդիպում էյի ընկեր ՍՏԱԼԻՆԻՆ, վորն ամեն անգամ մանրամասն կերպով հարց ու փորձ էր անում մեր աշխատանքի մասին, սովորեցնում էր խստագույն կոնսպիրացիա պահպանել և ասում էր, վոր պես է վորքան կարելի յե աստ ասագրել, վորովհետեւ վիթխարի յե հեղափոխական մարքսիզմի ասագիր պրոպագանդի կարիք:

Թուղթիկները, ինչպես մեզ պատմում էր Բոճորիձեն, գրում էր ընկեր ՍՏԱԼԻՆԸ: Սրբագրությունը 1900 թրվականին ուղղում էր Սաշա Ծուլուկիձեն: Մենք առավորող հասցնում էյինք նրան փորձնական ոտտիսկները և այն յես էյինք վերցնում ժամը 3-ին մոտ: Ամենորյա կապ ընկեր ՍՏԱԼԻՆԻ հետ պահպանում էյինք Միխո Բոճորիձեյի միջոցով:

1902 թվին Միխո Բոճորիձեն ինձ առաջարկեց տեղափոխվել աշխատելու Վրաց հրատարակչական ընկերության տպարան:

Խնդիր էր դրված— գաղտնի կերպով դուրս բերել տառեր ու գրաշարական ցեխի նյութեր, և այդպիսով ստեղծել ընդհատակյա լավ տպարան:

Յերբ բավականաչափ թվով նյութ կուտակվեց, սկսեցինք հարմար շենք վորոնել ընդհատակյա տպարան կազմակերպելու համար:

Լոտկինսկայա փողոցի տներից մեկում ապրում էյին

դեպոյի բանվորներ Սոլոգաշվիլիները: Նրանք ունեյին մի փոքր հողամաս և մեզ թույլ տվին կառուցել մի հարկանի տուն իր նկուղով:

Տունը շուտ կառուցեցինք:

Մենք նկուղային շենքը ներս էյինք մտնում պլիտայի և սենյակի պատի միջև գտնվող գաղտնի իջանցքով:

Այս անգամ տպարանական սարքավորանքն ավելի բարդ էր. թուղթ տախտակ և թմբուկ, վորը մենք ձուլել էյինք դեռևս 1901 թվականին Յերկաթուղային գլխավոր արհեստանոցներում: Մնում էր հարմարեցնել թմբուկը յերկու ուղիսի վրա, այն էլ կոնց Բոճորիձեն:

Դազգյահն սկզբում փոխադրեցինք և զրեցինք թուներում, քաղաքային ջրմուղի ռեզերվուարի տակ, Դավթի լեռան մոտ: Բայց շուտով կասկած ծագեց, վոր դազգյահը կարող են պատահաբար հայտաբերել. այդ ժամանակ նոր շենքն արդեն պատրաստ էր Լոտկինսկայա փողոցի վրա, և յես մեր տպարանական վոչ մեծ սարքավորանքը սայլակով այնտեղ փոխադրեցին:

1902 թվականին յես ձերբակալվեցի և Բագվի առաքման բանտից յերեք տարով աքսորվեցի Արխանգելսկի նահանգ:

1903 թվականի ամառը ուժեղ անձրևների ու հեղեղների հոսանքը քշեց տարավ մեր տնակը, վորի տակ գտնվում էր տպարանը: Տերը չվերականգնեց շինությունները և պատրաստվում էր ծախել իր հողամասը: Ստիպված յեղանք նորից շենք վորոնել: Դազգյահը ժամանակավորապես զրինք Չուկուրեթում, Գվինցաձեյի տանը: Դազգյահը տեղավորված էր բնակելի սենյակում, վոր բավական վտանգավոր էր:

Միխո Բոճորիձեն, վորին Կոմիտեն հանձնարարել էր կազմակերպել նոր, մեծ տպարան, զիմեց Յերկաթուղային արհեստանոցների նախկին բանվոր Դաթիկո Ռոստոմաշվիլուն, խնդրելով զիջել այն հողամասը, վորը Նավթուղի շրջանում կառույնով վերցրել էր նրա հայրը: Ստանալով

համաձայնությունը, դործի անցանք: Վորոշեցինք հիմնական տպարան կառուցել: Կառուցումն սկսվեց 1903 թվականին և ավարտվեց 1904 թվականի սկզբին:

Յես այդ ժամանակ, արտորավայրից փախչելուց հետո, գտնվում եյի Բագվում և աշխատում եյի Լադո Կեցխովելու կողմից սարքավորված տպարանում: Կազմակերպության առաջադրությունը, յես ընկերների հետ միասին Թիֆլիս փոխադրեցի մի արագատիպ մեքենա, նախորդ մասերի բաժանելով այն:

Շենքը Հավլաբարում արդեն պատրաստ եր, մնում եր միայն տանիքը ծածկել կղմինդրով: Մեքենան մեծ նախագգուշությունը նկուղ իջեցվեց, և մենք անմիջապես սկսեցինք աշխատանքը: Ժամանակը թանգ եր:

1904 թվականի հունվարին արտորավայրից փախչելուց հետո ընկեր ՍՏԱԼԻՆԸ վերադարձավ Թիֆլիս և նորից գլխավորեց բոլշևիկյան ընդհատակի աշխատանքը Վրաստանում և Անդրկովկասում: ՍՏԱԼԻՆԸ ապրում եր Միխո Բոճորիձեյի մոտ: Նա մեծ ուշադրություն եր նվիրում ընդհատակյա տպարանին և ղեկավարում եր վողջ կուսակցական անլեզալ մամուլը:

Նյութը տպագրության համար մենք ստանում եյինք Միխո Բոճորիձեյից: Ձեռագրերի մեջ գտնվում եյին ստալինյան թուղթիկները՝ «Թիֆլիս Բաղաֆի կազմակերպված բանվորներին», «Կոչ բանվորներին» և այլն:

Թուղթիկներին զուգընթաց, տպագրվում եյին նաև բրոշյուրներ, վորոնց թվում հիշում եմ Լենինի «Գյուղացիական չքավորությանը», ՍՏԱԼԻՆԻ «Հարևանցի կերպով կուսակցական տարածայնությունների մասին»:

ՍՏԱԼԻՆԻ գիրքն առաջինն եր «Բոլշևիկներ կուսակցական հարցերի շուրջը» սերիայում:

Ընկեր ՍՏԱԼԻՆԸ մի քանի անգամ զրուցել ե մեզ հետ, յերբ մենք նյութի համար գալիս եյինք Բոճորիձեյի մոտ:

Նա մեզ քաղաքական հարցեր եր տալիս, ցանկանալով

ծանոթանալ մեր մտահորիզոնի հետ, հարց ու փորձ եր անում աշխատանքի մասին, թափանցելով բոլոր ամենափոքր մանրամասնությունների մեջ:

Ուշագիր կերպով լսելով մեզ, ընկեր ՍՏԱԼԻՆԸ ցուցումներ եր տալիս մեզ, թե ինչպես լավ կլինի կազմակերպել տպագրական աշխատանքի պրոցեսը, ինչպես պահպանել տպարանը վոստիկանական հետամտությունից:

Գրականությունը, վորը մենք տպագրում եյինք, դաստիարակում եր մեզ քաղաքականապես, ղինելով մեզ պայքարի համար ընդդեմ մենշևիկների, պրոպագանդ մղելով Լենինի և ՍՏԱԼԻՆԻ ուսմունքը պրոլետարական կուսակցության համար:

Այդ գրականությունը մենք սովորաբար կարդում եյինք բարձրաձայն, հավաքված դադգյահի մոտ:

Մենք աշխատանքն սկսում եյինք առավոտյան ժամը 6-ին: Ժամը 9-ին նկուղից վեր եյինք բարձրանում նախաձաշելու, այնուհետև նորից եյինք իջնում և աշխատում եյինք մինչև ժամը 4-ը: Ծաշից հետո աշխատում եյինք մինչև լինում, ամբողջ գիշերը դադգյահի մոտ եյինք անցկացնում: Ընկեր ՍՏԱԼԻՆԸ դրա համար մեզ նախատում եր, ասում եր, վոր պետք ե հանգստանալ:

Նկուղը լավ եր սարքավորված և մեքենայի աղմուկը դուրս չեր թողնում: Պատերը շարված եյին աղյուսից ու քարից: Ողբ թափանցում եր ողանցքի միջոցով: մենք նույնիսկ թիթեղյա վառարան եյինք հարմարեցրել, վորպեսզի նրա մեջ վառենք անպետք թղթերը, թղթի կրտորները: Վառվում եյին գազի յերեք լամպ, չորրորդն ու հինգերորդը վառում եյինք տպագրության ժամանակ: Յես աշխատում եյի վորպես մեքենավար-դարսող, բայց սովորեցի նաև գրաշարական գործը: Հարկ եր լինում աշխատել նաև գրականության փոխադրման գծով: Մեր սայլակը յերկանիվանի յեր, ռեսորներով: Տպագրական թուղթը մենք

գնում էյինք 10—15 փթով: Սկզբում թուղթը տեղափոխում էյինք ձերունի Ռոստոմաշվիլու նկուղը, վորը միրգ եր վաճառում, իսկ այնտեղից մաս-մաս փոխադրում էյինք տպարան: Տպարանից մենք դուրս էյինք գալիս և վերադառնում էյինք կամ վաղ առավոտյան, յերբ դեռ բոլորը քնած էյին լինում, կամ գիշերը: Մենք սովորաբար սայլակով գնում էյինք խուլ փողոցներով: Պատահում եր, վոր թեքվում ես դեպի փողոցի անկյունը և այս ու այն կողմն ես նայում, յեթե կասկածելի մարդիկ չեն լինում,—ապա շարունակում ես ճանապարհը:

Թբիլիսիի ընդհատակյա տպարանը ստալինյան շկոբայի բոլշևիկյան ընդհատակի խիստ կոնսպիրատիվ ուրինակ ե:


1905 թվականի հեղափոխական դեպքերի յեռ ու զեռի ժամանակ մենք վերև բարձրացանք, դուրս յեկանք փողոց: Ընդհանուր ալեկոծությամբ բռնկված այդ որերին մենք մասնակցում էյինք միտինգներին, գնում էյինք այնտեղ, ուր, գիտեյինք, վոր հանդես կգա ընկեր ՄՏԱԼԻՆԸ:

Միտինգներն անցնում էյին ջերմ դիսկուսիաներով: Ընկեր ՄՏԱԼԻՆԸ վճռականապես մերկացնում եր մենշևիկների օպորտունիստական բնությունը, ջախջախում եր նրանց բոլոր «ապացույցները» և յերբ, պատահում եր ՄՏԱԼԻՆԻ յելույթից հետո սպասում էյինք մենշևիկների պատասխան-յելույթին, պարզվում եր, վոր նրանք արդեն ծլկվել են:

Այդ որերին առանձնապես աճեց բոլշևիկյան մամուլի դերը, հարկավոր էյին ստալինյան թուլցիկներ, կուսակցական գրականություն, և մենք նորից իջանք մեր ստորերկիրը—շարունակելու աշխատանքը:

Դադգյանն աշխատում եր առանց դադարի:

1906 թվականին կուսակցական կազմակերպությունը Մակարե Գոգուաձեյին, ինձ, Չիչիկո Կալանդաձեյին աշխատանքի ուղարկեց Պետերբուրգ: Մենք այնտեղ իմացանք Հավլաբարի բոլշևիկյան տպարանի պատահական ձախողման մասին:



Նկարիչ Ի. Թոփճեյի նկարված

Գեղեր ՄՏԱԼԻՆԸ Ռոմանովների

Ի. ԴԱՐԱԽՎԵԼԻՁԵ

ԸՆԴՀԱՏԱԿՅԱ ՏՊԱՐԱՆ

Ընկեր ՍՏԱԼԻՆԸ հաճախ ասում էր մեզ բոլորիս, Բաթումիի նրա խմբակում աշխատողներին, Թուրքիկներ և ղանազան բրոշյուրներ տպագրելու համար ընդհատակյա տպարան կազմակերպելու անհրաժեշտության մասին:

— Պետք է աշխատավորների լայն մասսաներին ծանոթացնել մեր աշխատանքի հետ, բաց անել նրանց աչքերը, կազմակերպել բանվորներին ցարիզմի դեմ պայքարելու համար,—միշտ ասում էր նա, յերբ խոսք էր լինում տպարանի մասին:

Ընկեր ՍՏԱԼԻՆԻ ջանքերով հավաքվեց տպագրական դազգլահ: Նա դրվեց այն սենյակում, վորտեղ ապրում էր ընկեր ՍՏԱԼԻՆԸ: Թուրքիկներ տպելու համար մենք Թուրք ունեյինք: Թուրք միշտ ուզած քանակով կարելի չէր ճարել, միայն թե փող լիներ:

Այն ժամանակ Բաթումիի ձեռնարկությունների մեծ մասում աշխատում էին սոցիալ-դեմոկրատական խմբակ-

ներ, վորոնց դեկավարում եր ընկեր ՍՏԱԼԻՆԸ: Հաճախ եյին կազմակերպում քաղաքական ցույցեր. Բաթումի բանվորների ամենախոշոր ցույցերից մեկը՝ 1902 թվականի մարտի 9-ին՝ ցարական զորքերը գնդակահարեցին, և ցույցին մասնակցող մի քանի հարյուր բանվոր Բաթումից արտաքրովեցին:

Մարտի 9-ի յերեկոյան, ցույցից հետո, ընկեր ՍՏԱԼԻՆԸ մեզ հավաքեց և ասաց.

— Անհրաժեշտ է, ինչ գնով ել լինի, բանվորական լայն մասսաներին, բոլոր աշխատավորներին վոչ միայն Բաթումի, Թիֆլիսի, Փոթիի և Բագվի, այլ և ամբողջ Ռուսաստանի՝ ծանոթացնել Բաթումում տեղի ունեցած դեպքերի հետ: Թող իմանան բոլոր բանվորները, վոր ցարական իշխանութիւնը հանդիսանում է կապիտալիստների և բուրժուաների պաշտպանը: Պետք է շտապ կերպով թրուցիկներ բաց թողնել՝ նվիրված Բաթումի բանվորների զինդակահարութեանը:

Յերբեք չեմ մոռանա այն գիշերը: Նեղլիկ սենյակ, աղոտ լուսավորված նավթի ճրագով: Փոքրիկ, կլոր սեղանի շուրջը նստած է ՍՏԱԼԻՆԸ և գրում է: Նրա կողքին տպագրական դադգյահն է, վորի մոտ աշխատում են գրաշարները և կոծիա կանգելակին: Տառերը դասավորված են լուցկու և գլանակի տուփերի մեջ և թղթի կտորների վրա: Ընկեր ՍՏԱԼԻՆԸ մաս-մաս գրաշարներին է տալիս իր գրածը: Բոպե առ բոպե յես և կոծիան դուրս ենք գալիս բակը և զգաստ կերպով ականջ ենք դնում գիշերային լուռութեանը: Վերջապես ՍՏԱԼԻՆԸ ավարտեց գրելը: Տեղից վեր կացավ և գրածը կարդաց մեզ:

Թուուցիկի տեքստը մեզ բոլորիս վրա մեծ տպավորութիւն գործեց: Պարզ ու հասկանալի բառերով թուուցիկը պատմում էր բանվորներին, «աշխարհը կերակրողներին» գնդակահարելու մասին, վորոնք համարձակվել են պահանջել իրենց ծանր զրուծեան բարելավումը: Նա բա-

ցատրում էր, վոր ցարն ու ամբողջ պետական ապարատը կանգնած են կապիտալիստների շահերի պահակադիրքում, վոր բանվորները վոչ մի տեղից ոգնութեան հույս չունեն և միայն իրենց համախմբումն ու համերաշխ յելույթը կոգնեն բանվորներին տապալելու ցարին և կապիտալիստներին: Նա մանրամասն կերպով նկարագրում էր բանվորների գնդակահարութիւնը:

Արդեն լուսացավ, բայց աշխատանքը շարունակվում էր: Մինչև առավոտ տպագրվեց մի քանի հարյուր թուուցիկ: ՍՏԱԼԻՆԸ գրաշարներին առաջարկեց շարվածքը չցրել, այլ ոգտագործել նորից թուուցիկներ տպելու համար, վորպեսզի թուուցիկներն ուղարկվեն նաև գյուղը: Յեւ իրոք, ցույցի գոհերին թաղելուց հետո տպարանը լրացուցիչ կերպով տպագրեց մի քանի հարյուր թուուցիկներ, վորոնք մենք տարածեցինք գյուղացիներին մեջ:

Թուուցիկները տարածելու կարգը այսպես էր. ձեռնարկութիւնների ներկայացուցիչները—առաջվոր բանվորները, ընկեր ՍՏԱԼԻՆԻ ունկնդիրները, գալիս եյին մեզ մոտ և ՍՏԱԼԻՆԸ ինքը նրանց տալիս էր վորոշ քանակութեամբ թուուցիկներ, ինչպես բանվորների մեջ տարածելու համար, նույնպես և գյուղ ուղարկելու համար:

Յես ինքս վերցրի 30 թուուցիկ և դրանք տարածեցի Շեմոկմեղի, Ղոմի, Ողուրգեթի և ուրիշ գյուղերի գյուղացիների մեջ: Թուուցիկները հեղափոխականացնող մեծ ազդեցութիւն գործեցին գյուղացիների վրա: Նրանք մի քանի անգամ եյին կարդում թուուցիկները: Ստալինյան թրուուցիկների ընթերցումն առաջ էր բերում կարծիքների փոխանակում, սպառնալիքներ ու անեծքներ ցարի, կալվածատերերի և կապիտալիստների հասցեյին:

* *

Մի անգամ ինձ մոտ յեկավ Ռոտշիլդի գործարանի բանվոր Մոդեբաձեյի կինը և նախազգուշացրեց, վոր այն տունը, վորտեղ ապրում էր ընկեր ՍՏԱԼԻՆԸ և տեղավոր-

ված եր տպարանը, հսկողութեան տակ ե: Ընկեր ՍՏԱԼԻՆԸ անմիջապէս միջոցներ ձեռք առաւ, վորպեսզի տպարանը փոխադրվի ուրիշ տեղ, և մեզ մանրամասն կերպով հըրահանգեց, ինչպէս մեզ պահենք հարցաքննութիւններ ժամանակ, յետե մեզ ձերբակալեն:

Նշանակված ժամանակ մեր տանը մոտեցաւ կառքը: Ընկեր ՍՏԱԼԻՆԸ ինքը դուրս բերեց տպագրական դադգյահի քանդված մասերը պարկի մեջ փաթաթած և Կոծիա Կանդելակիի ոգնութեամբ դրանք տարանք մեր ընկեր Լոմ-Ջաբիայի մոտ:

Դրանից հետո ՍՏԱԼԻՆԸ մեզ մոտ յեկաւ միայն յերրորդ օրը: Այն մասին, թե այդ օրերին վորտեղ ե յեղել նա և ի՞նչ ե արել, մենք չգիտեյինք: Անողոտ եր նրան հարցնել այդ մասին, նա մեծ կոնսպիրատոր եր:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

էջ

Խորհրդային Վրաստանի 15-րդ տարեգարծի օրը Խորհրդային Վրաստանի աշխատավորների կողմից ժողովուրդների մեծ առաջնորդ մեծ ՍՏԱԼԻՆԻՆ ուղղված նամակից	7
Հրատարակչութեան կողմից	9

I. ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՏԱՆԵԿԱՆ ՏԱՐԻՆԵՐԸ

Գերմանական զբոլ Եմիլ Լյուդվիգի հետ ընկեր ՍՏԱԼԻՆԻ ունեցած զրույցից	13
«Զարյա Վոստոկա»-ի 1936 թվականի ոգոստոսի 12-ի «Մեծ որինակը» առաջնորդող հոդվածից	15
Պ. Բախմանով. «Յես պետք ե տեսնեմ Լենինին»	17
Գ. Գլուքիձե. Անժոռանալի տարիներ	23
Դ. Գոգոխիա. Վոլջ կյանքում հիշողութեան մեջ մնացել են այն օրերը	29

II. շԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԴՊՐՈՑԸ

«ՊՐԱՎԴԱ»-ի 1935 թ. սեպտեմբերի 24-ի «Կոմունիզմի պրոպագանդիստները» առաջնորդող հոդվածից	43
Ի. Վաքել. Ընդհատակի տարիները	49
Գ. Պ. Գալլայեվ. Մերելի ուսուցիչը	55
Պ. Դ. Խուրքիլաւա. Մեր խմբակը դեկավարում եր ընկեր ՍՏԱԼԻՆԸ	62
Գ. Ի. Յելիաքեդաշվիլի. Տարիներն ուսումնարանում	66
Ո. Ինժեքարյան. Ստալինյան կրակոտ խոսքերը	69
Ի. Դաբախվիձե և Դ. Վադաշկուրիա. Բաթումի ընդհատակը	76
Վերա Լոմջարիա. ՍՏԱԼԻՆԸ մեր մեջ դաստիարակեց արիւթյուն և ատելութուն դեպի թշնամին	84
Ուսման Գուրգենիձե. Բոլշեիզմի մեծ ազիտատորը և պրոպագանդիստը	94
Պ. Գ. Կուրիձե. «Յրեք կփայլի մեզ համար»	98
Կոտե Կալանդարով. Պայքարի Ստալինյան դպրոցը	106

III. ՍՏԱԼԻՆՅԱՆ ՏՈՂԵՐԻ ՄԵՇ ՈՒԺԸ

«Զարյա Վոստոկա» թերթի 1936 թվականի ապրիլի 18-ի առաջնորդողից՝ «Բոլշեիզմը մամուլի օրվան նախապատրաստվելու համար»	117
Գ. Լեյաշվիլի. Բոլշեիզմի ընդհատակում դադգյահի մոտ	119
Ի. Դաբախվիձե. Ընդհատակյա տպարան	127

Պատաշխատող խմբագիր՝
Վ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Տեխնիկական խմբագիր
և բողոքիչ՝ Ս. ԳՈՎԼԱԹՅԱՆ

Թղթի չափը՝ 72X105:
Գրքի ծավալը՝ 8¹/₂ տպագրական թերթ:
Գլավիտի լիազոր № Ս.—1190:
Պատվեր № 1688: Տիրաժ 5000:

Հանձնված է արտադրության՝
1939 թ. ոգոստոսի 14-ին:
Ստորագրված է տպագրության՝
1939 թ. նոյեմբերի 10-ին:

Վրաստանի Պետհրատ
Քաղաքական գրականության
սեկտոր: Հրատ. № 52:

Տպագրված է՝
«Տեխնիկա դա Շրումա» տպարանում
Թբիլիսի, Փուլքելաձեյի փողոց № 5:

ՀՀ Ազգային գրադարան



NL0186099

ԳԻՆԸ 4 Ռ. 50 Կ.
ԿԱԶՄԸ 2 ՌՈՒՔԼԻ